ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԻ ԲՐԻԳԱԴ

Բրիտանական դեսպանատուն Երևանում

Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատուն

HELSINKI CITIZENS ASSEMBLY

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԻ ԲՐԻԳԱԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ծրագիրն իրականացվել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Ադրբեջանի ազգային կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի «Հելսինկյան նախաձեռնություն-92» ՀԿ հետ համատեղ՝ Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ:
Ծրագիրն իրականացվել է 2008 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2010 թվականի մարտի 31-ը:

Վանաձոր 2010

Խմբագիր՝ **Արթուր Սաքունց**

Խմբագրակազմ՝ **Անահիտ Դանիելյան**
Նաիրա Բուլղադարյան

Լուսանկարները՝ **Անահիտ Դանիելյանի**
Սվետլանա Բարսեղյանի
Անժելա Հարությունյանի

Համակարգչային ձևավորումը՝ **Արմեն Օսիպովի**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 4

ԳԼՈՒԽ 1

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԻ ԲՐԻԳԱԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1.1 Բախումների հետևանքները 5
1.2 Պատերազմից տուժածների շահերի պաշտպանության ուղիները 12
1.3 Երիտասարդ լրագրողները հանուն խաղաղասիրության 14
1.4 Երիտասարդ խաղաղասերների ինտերնետային կայքը 15

ԳԼՈՒԽ 2

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱԲԱՆ 16

2.1 Ադրբեջան 17
2.2 Լեռնային Ղարաբաղ 22
2.3 Հայաստան 28

ԳԼՈՒԽ 3

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3.1 Լեռնային Ղարաբաղ 34
3.2 Հայաստան 44

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 52

ԱՌԱՋԱԲԱՆ

Երիտասարդների ներգրավումը խաղաղասիրական առաքելության մեջ նորություն չէ: Բազմաթիվ սեմինարներ, հանդիպումներ, համաժողովներ են կազմակերպվել, որոնց մասնակիցները հանդիսացել են հակամարտության մեջ գտնվող հասարակությունների երիտասարդները՝ լրագրողներ, ուսանողներ, արվեստագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորում» ծրագրի նպատակն էր նպաստել երիտասարդների դերի բարձրացմանը, նրանց արդյունավետ մասնակցությանը ղարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման գործընթացում՝ ծանոթացնելով ղարաբաղյան կոնֆլիկտից տուժածների խնդիրներին և ուսուցանելով այդ խնդիրների ուսումնասիրման մեթոդներին:

Սա փորձ էր ձևավորելու մեկ միասնական թիմ՝ երիտասարդ խաղաղասերների բրիգադ, որը կոնֆլիկտից տուժածների շահերի պաշտպանությունը կդիտարկեր որպես ընդհանուր խնդիր: Այսպիսով, փորձ արվեց երիտասարդներին ցույց տալ խաղաղասիրական գործունեության արդյունավետ ուղիներից մեկը՝ կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանը նպաստելու նպատակով իշխանություններին ներկայացնել կոնֆլիկտի հետևանքների ծանրությունը և բարձրացնել նրանց պատասխանատվությունը այդ խնդիրների լուծման հարցում:

Իրավիճակները հակամարտող կողմերի հասարակություններում էական տարբերություն ունեն, որը չէր կարող իր ազդեցությունը չունենալ նշված նպատակներին հասնելու համար:

Նշեմ, որ ծրագրի սկզբնական փուլում տեղի ունեցան պատերազմական գործողություններ Հարավային Օսեթիայում: Սա այն դեպքերից է, երբ գործողությունների իրականացման ընթացքում ոչ միայն չնախատեսված հանգամանքներ ի հայտ եկան, այլև տեղի ունեցավ սառեցված կոնֆլիկտի թեժացում, որն իր հերթին բերեց նոր զոհեր, ներքին տեղահանվածներ, ռազմագերիներ և անհայտ կորածներ:

Քանի որ երիտասարդ խաղաղասերների հանդիպումները նախատեսված էր անցկացնել Թբիլիսիում, հարավ-օսեթական նոր պատերազմը որոշակի դժվարություններ առաջացրեց. շատերը նույնիսկ գտնում էին, որ անվտանգ չէ Թբիլիսիում հանդիպումների կազմակերպումը:

Այնուամենայնիվ, նրանք կայացան, որը, կարծում եմ, վկայում է մասնակիցների կողմից խաղաղասիրական գործունեության արժեվորման մասին:

Ա. Սաքունց
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ

ԳԼՈՒԽ 1

Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորումը

Բախումների հետևանքները

Երիտասարդ խաղաղասերները 2008թ. հոկտեմբերի 1-4-ը առաջին անգամ հանդիպեցին Թբիլիսի քաղաքում:

Հայաստանից ներկայացված էին տասը երիտասարդներ, Ադրբեջանից և Լեռնային Ղարաբաղից՝ իննական:

Եռօրյա քննարկումներին որպես ուսուցանողներ հրավիրվել էին՝ Արզու Աբդուլլաևան (ՀՔԱ Ադրբեջանի ազգային կոմիտեի ղեկավար, Անահիտ Բայանդուրը (ՀՔԱ Հայաստանի կոմիտեի համակարգող), Ստեփան Գրիգորյանը («Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի» նախագահ, քաղաքագետ), Գեղամ Վարդանյանը («Internews Հայաստան» ՀԿ, պրոդյուսեր և լրագրող), Ավազ Հասանովը (Ադրբեջանի «Հումանիտար հետազոտությունների ասոցացիայի» նախագահ) և Լիանա Բերիան («Համաձայնություն» ասոցացիա):

Եռօրյա դասընթացի թեմաներն էին.

- Չլուծված կոնֆլիկտի ազդեցությունը Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման վրա (Ստեփան Գրիգորյան)
- Քաղաքացիական հասարակության դերը կոնֆլիկտի/հակամարտության խաղաղ լուծման գործում (Արթուր Սաքունց)
- Պաշտպանական մեխանիզմները կոնֆլիկտից տուժածների համար (Ավազ Հասանով)
- Հանդուրժողականության մշակույթի ընկալումը (Լիանա Բերիա)
- Գենդերային ոլորտը խաղաղասիրության մեջ (Սոֆյա Բաբայան)
- Խաղաղասիրական գործողությունների կազմակերպման սկզբունքներն ու ուղիները (Արզու Աբդուլլաևա, Անահիտ Բայանդուր)
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և հասարակական հարաբերությունների դերը խաղաղասիրության մեջ (Գեղամ Վարդանյան)

Հոկտեմբերի 2-ին մեկնարկեց դասընթացը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը ներկայացրեց ծրագիրը, դերը, ակնկալվող արդյունքները և գործողությունները, որոնք ուղղված են ծրագրի նպատակին հասնելու համար:

Այնուհետև խոսքը տրվեց ՀՔԱ Ադրբեջանի ազգային կոմիտեի ղեկավար Արզու Աբդուլլաևային: Նա ներկայացրեց «Խաղաղասիրական գործողությունների կազմակերպման սկզբունքներն ու ուղիները» թեման:

Խաղաղասիրության սկզբունքների ուսուցանում երիտասարդ խաղաղասերներին

Նա պատմեց, որ 20 տարի առաջ Հայաստանում և Ադրբեջանում՝ որպես Խորհրդային Միության հանրապետություններ, քաղաքացիական հասարակություն գոյություն չուներ: Երբ իրեն առաջին անգամ անվանեցին իրավապաշտպան, զարմացավ, որովհետև ինքը պարզապես օգնում էր մարդկանց: *«Ես իմ երկրի քաղաքացին եմ, ում հետաքրքրում են մարդիկ, նրանց խնդիրները: Ակնհայտ է, որ այս կոնֆլիկտը ստեղծված էր և շատ լավ պլանավորված, և պարզ է, որ այդ ամենն արված էր Խորհրդային Միության անվտանգության մարմինների կողմից: Մենք չպետք է թշնամիներ լինենք, ամեն ինչ պետք է անենք, որ կոնֆլիկտը վերանա: Մենք այսօր թշնամի ենք դարձել, բայց իրականում այդպիսին չենք ու դա փաստ է: Ինձ ասում են, եթե դու խաղաղություն ես ստեղծում, դու հայրենիքի դավաճան ես: Ես համոզված եմ, որ այս հանդիպման վերջում մենք կստեղծենք խաղաղասերների խումբ: Կարծում եմ՝ հասկացող մարդկանց շրջանում կոնֆլիկտ չպետք է լինի: Մենք չենք ուզում մյուս կողմին դիտել թշնամի: Դուք՝ երիտասարդներդ, սովորում եք մեր փորձով, դուք պետք է պատրաստված լինեք, դուք պետք է խելամիտ լինեք»:*

Այնուհետև խոսքը տրվեց ՀՔԱ Հայաստանի կոմիտեի համակարգող Անահիտ Բայանդուրին: Նա երիտասարդներին պատմեց իր և Արզու Աբդուլլաևայի համագործակցության պատմությունը, մտերմության մասին, որ ձևավորվել է ղարաբաղյան հակամարտության տարիներին:

Ներկայացնելով պատերազմի ընթացքում իր ու Արզու Աբդուլլաևայի համատեղ ջանքերը՝ ուղղված հակամարտության զոհերի շահերի պաշտպանությանը, նա կարևորեց նոր կապերի հաստատումը նոր սերնդի միջև:

«Մենք չպետք է նստենք ու նայենք, այլ պետք է հստակ քայլեր կատարենք ու չվախենանք կատարել առաջին քայլը: Մենք պետք է սովորենք տարբերակել ազգայնամոլությունը և հայրենասիրությունը: Այսօր դժվար է տարբերակել կեղծիքն ու ճշմարտությունը, դրա համար պետք է շատ կարդանք, եթե մենք ինչ-որ բան գիտենք, մեզ թվում է, թե մենք ամեն ինչ գիտենք: Ես ուզում եմ, որ ադրբեջանցիները զգան, որ ես իսկապես հոգում եմ իրենց մասին: Կոնֆլիկտի ժամանակ նույն իրադարձությունները տարբեր էին մեկնաբանվում թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի ԶԼՄ-ների կողմից: Հիմա հասարակությունը ավելի խելացի է, քան 20 տարի առաջ: Եվ պետք է այնպես անենք, որ մեր մեջ չկարողանան թշնամություն սերմանել: Այդ թշնամությունը սերմանվում է սուտ և կեղծ հոդվածների, լուրերի, այնպիսի փաստերի (գողություններ, սպանություններ) միջոցով, որոնք հետագայում դառնում են թշնամական վերաբերմունքի և, ի վերջո, պատերազմի պատճառներ:

Կարծիքների փոխանակում

Այս ամենի հետևում կանգնած են մարդիկ, որոնք ցանկացել են մեր մեջ սերմանել այդ թշնամական վերաբերմունքը: Բայց ինչ էլ որ գրեն, ամեն մեկիս մեջ պետք է լինի մեր կարծիքը, արժեքները և չպետք է ոչ ոքի լսել: Կոնֆլիկտի կարգավորման համար ներքին ցանկություն է պետք, մնացածը կլինի»,- ավարտեց իր խոսքը Անահիտ Բայանդուրը:

ՀՀ Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի նախագահ, քա-

ղաքագետ Ստեփան Գրիգորյանը ներկայացրեց «Չլուծված կոնֆլիկտի ազդեցությունը Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման վրա» թեման:

«Մենք շատ նման ենք միմյանց: Եթե երկու ազգ մոտ են միմյանց ապրում, նրանք միմյանցից վերցնում են և՛ ավանդույթները, և՛ մշակույթը, իսկ դա շատ բնական է»: Որպես օրինակ բերեց մի դեպք: Երբ ինքը մի անգամ ուսանողներին ներկայացրել է մի թրքուհու, ոչ ոք այդպես էլ չի կռահել, որ թրքուհին հենց այդ աղջիկը թրքուհի է: «Դա բնական է, որովհետև նա մեզ մոտ է ապրում, որովհետև նա մեզ նման է: Երբեք ազգային երգեր չեն լինում, լինում են տարածաշրջանային երգեր, երբ մարդիկ մոտ են գտնվում իրար: Կառավարության ազդեցությունը քաղաքացիական հասարակության վրա շատ մեծ է, և որպես օրինակ կարող եմ բերել այն փաստը, երբ հայկական խաչքարերը ադրբեջանցիները ջարդում են, հայերը ոգևորվում են և ամեն ինչ անում, որ թշնամական վերաբերմունքը մեծանա մեր մեջ, բայց երբ այդ նույն խաչքարերը Հայաստանում գտնվում են նույն վատ վիճակում, այդ փաստը չի հետաքրքրում կառավարությանը: Ցանկացած կոնֆլիկտ բերում է փախստականներ, կոնֆլիկտի զոհեր կամ ուղղակի քաղաքական հետևանքներ: Օրինակ՝ Հարավային Օսեթիայի կոնֆլիկտի հետևանքով Հայաստանում փակվեցին ճանապարհները, մենք ունեցանք տնտեսական խնդիրներ (բենզին չկար, ապրանքաշրջանառությունն ընկավ և այլն): Ռուս-օսեթական պատերազմի ժամանակ Ռուսաստանի Դաշնությունը շատ կորուստներ ունեցավ՝ կապված տնտեսական ոլորտի հետ»:

Քաղաքագետը գնահատեց տնտեսական իրավիճակը երեք երկրներում՝ դրա զարգացման համար հրատապ համարելով լուծել հակամարտությունը ու զարգացնել փոխհարաբերությունները:

«Կոնֆլիկտի չլուծվածությունն ազդում է ժողովրդավարության վրա, բերում է մեծ շահեր իշխանությունների համար՝ փող են աշխատում»,- երիտասարդ խաղաղասերներին ասաց քաղաքագետը:

«Ես դեմ չեմ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշմանը, բայց պիտի որոշես՝ դա ինքնորոշում է, թե չէ: Ինքնորոշումը պետք է լինի այնպիսին, որ ղարաբաղցիները համագործակցեն ադրբեջանցիների հետ, ֆիզիկական բնաջնջման վտանգի տակ չընկնեն: Իշխանությունը ոչ ստանդարտ ձևով իր լեգիտիմությունը իրականացնում է կոնֆլիկտի չլուծվածությամբ: Շատ կարևոր է քաղաքացիական հասարակության դերը կարծրատիպերը վերացնելու գործում: Քաղաքական ոլորտը ուսումնասիրել է պետք, որպեսզի կարողանանք ճիշտ ձևով լուծենք կոնֆլիկտը»:

Թեման ամփոփելով՝ Ստեփան Գրիգորյանը ավելացրեց. *«Ռուսաստանը չի կարող միջնորդ հանդիսանալ ղարաբաղյան հակամարտության համար»:*

Հաջորդ թեման՝ «Պաշտպանական մեխանիզմները կոնֆլիկտից տուժածների համար», ներկայացրեց Ադրբեջանի «Հումանիտար հետազոտությունների ասոցացիայի» նախագահ Ավազ Հասանովը:

Հասարակական պաշտպան կարող է լինել ցանկացած քաղաքացի (չինովնիկ, քաղաքագետ և այլն):

Կոնֆլիկտի զոհեր կարող են լինել.

- զինվորները
- փախստականները
- մարդիկ, որոնք գտնվում են կոնֆլիկտի գոտում
- կանայք
- երեխաները

➔ անհայտ կորածները

Կոնֆլիկտի լուծման համար անհրաժեշտ է ստեղծել «հասարակական խումբ»:

Այն որոշակի ժամանակահատվածում միմյանց հետ կապված գործողությունների ամբողջություն է, որն ուղղված է կոնկրետ նպատակի և կոնկրետ խնդրի լուծմանը:

«Պաշտպանական մեխանիզմները կոնֆլիկտից տուժածների համար» թեմայի ուսուցանում

«Հասարակական խումբ»-ը գործընթաց է, որը բացահայտում է հասարակական հիմնախնդիրը, հրավիրում է բնակչության կամ անհատների ուշադրությունը և ուղղված է կոնկրետ փոփոխությունների:

Այն մի քանի գործողությունների ամբողջություն է: Փոփոխությունների հասնելու համար անհրաժեշտ է փոխկապակցված գործողություններ:

Գործողությունները և մեթոդները պետք է համապատասխանեն տվյալ երկրի մշակույթին, կրոնին և քաղաքական իրավիճակին:

Այն ուսուցողական և լուսաբանական գործընթաց է, որը վերաբերում է խմբի մասնակիցներին և առաջնորդներին: Այդ գործընթացում հնարավոր է բազմաթիվ մեթոդների և հմտությունների ուսուցում, որը հնարավորություն կտա նոր առաջնորդների ի հայտ գալուն:

«Հասարակական խումբ»-ը պետք է հիմնվի արժեքների և սկզբունքների վրա:

Կարևոր հանգամանք է նաև ճիշտ փոխհարաբերության ձևավորումը միմյանց միջև, որովհետև խմբի բոլոր մասնակիցներն աշխատում են մեկ նպատակի և լավ արդյունքի հասնելու համար:

«Հասարակական խմբի» ձևավորման ընթացքում տեղի է ունենում ռեսուրսների և էներգիայի համաձուլում մեկ կոնկրետ նպատակի շուրջ:

Սկզբնական շրջանում անհրաժեշտ է աշխատել մեկ կոնկրետ խնդրի լուծման շուրջ, որը համախմբում է, զարգացնում հմտություններ և խթանում է հետագա գործողությունները:

Գեղամ Վարդանյանը՝ «Internews Հայաստան» ՀԿ-ի լրագրող և պրոդյուսեր, ներկայացրեց «Տեղեկատվական տեխնոլոգիաների և հասարակական հարաբերությունների դերը խաղաղասիրության մեջ» թեման: Խաղաղասերներին նա ցուցադրեց տեսաֆիլմ՝ «Պատերազմի և խաղաղության միջև» 2005-06 թթ., որը նկարահանվել էր Հայաստանում և Ադրբեջանում:

Ֆիլմի նպատակն էր պարզել՝ ինչ են մտածում Ադրբեջանի և Հայաստանի քաղաքացիները կոնֆլիկտի մասին, ինչպիսի վերաբերմունք ունեն հարևան պետության նկատմամբ, ինչպես կլուծվի ղարաբաղյան կոնֆլիկտը և արդյոք հնարավոր է, որ մի օր ադրբեջանցիները և հայերը բարեկամանան:

Ֆիլմը ցույց տվեց, որ երկու կողմերի մոտ դեռ պահպանվում է ոչ բարյացակամ հարաբերություններ միմյանց նկատմամբ: Միաժամանակ կային կարծիքներ, որ հնարավոր է բարիդրացիական հարաբերություններ վերականգնումը: Երիտասարդության շրջանում չպետք է իշխի այդ բացասական վերաբերմունքը, քանի որ հարևան պետությունները, ի վերջո, պետք է եթե ոչ բարեկամանան, ապա գոնե վերանա պատերազմի սպառնալիքը, և կոնֆլիկտը լուծվի,

որն անհրաժեշտ է և՛ Ադրբեջանին, և՛ Հայաստանին, և՛, իհարկե, Լեռնային Ղարաբաղին:

Այնուհետև նա ներկայացրեց տարբեր ինտերնետային կայքերի աշխատանքները, այն մասին, թե ինչպես են անդրադառնում կոնֆլիկտի թեմային, և առհասարակ, արդի ժամանակներում ինչ դեր են խաղում կայքերը մարդկանց կյանքում:

Օրինակ, այնպիսի կայքեր, որոնք մեր օրերում մեծ տարածում ունեն՝ www.xronika.com, www.irevan-az.com, www.gagashev.net, www.peacebuilding.am, www.google.com, www.southcaucasus.com և այլն: Նա ցուցադրեց նաև այնպիսի կայքեր, որոնց միջոցով հայ-ադրբեջանական հարաբերությունները տեղափոխվել են վիրտուալ աշխարհ:

Երիտասարդների պատասխաններից պարզ դարձավ, որ այս բոլոր կայքերից նրանք օգտվում և ինֆորմացիա են ստանում:

Վերջում Գեղամ Վարդանյանը նշեց. *«Այս ամենը շատ կարևոր է և մեր ժամանակներում առանց համակարգչի կամ ինտերնետային ցանցի, կայքերի դժվար է ժամանակին համահունչ քայլել»:*

«Ռե ստուդիա» ասոցացիայի ղեկավար Մամուկա Կուպարաձեն ներկայացրեց իր պատրաստած տեսաֆիլմը, որտեղ նկարագրված էին պատերազմի հետևանքով տուժած մարդկանց՝ փախստականների կենսապայմանները: Վրացի մասնագետն այցելել էր ինչպես Ադրբեջան, այնպես էլ Հայաստան, ծանոթացել փախստականների հետ, հետաքրքրվել, զրուցել նրանց հետ նրանց ապագայի մասին:

Հոկտեմբերի 3-ին՝ դասընթացի երկրորդ օրը, լեզվաբանական գիտությունների թեկնածու, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի դոցենտ Սոֆյա Բաբայանը ներկայացրեց «Գենդերային ոլորտը խաղաղասիրության մեջ» թեման:

«Գենդերը գիտություն է, որը հետաքրքրվում է կանանց և տղամարդկանց փոխհարաբերություններով: Գենդերն ինքնին հասանելի ստատուս է»,- նշեց Ս. Բաբայանը:

Հասարակության մեջ ընդունված գենդերային ձևերն են.

- մայրիշխանություն
- հայրիշխանություն
- հիլանիա

Գենդերային մոտեցումները լինում են.

- կենսաբանական
- կենսասոցիալական-գենոֆոնդը ընկած է կանանց վրա
- սոցիալական-տարբեր հասարակություններում տարբեր է, կին կամ տղամարդ ոչ թե ծնվում են, այլ՝ դառնում

Գենդերային չափորոշիչներն են.

- անհատական - ես տղա եմ, դու աղջիկ
- կառուցվածքային - կանանց և տղամարդկանց դիրքը տվյալ հասարակությունում (կրթական, քաղաքական կյանքում,որը կախված է տվյալ երկրի մենթալիտետից)
- մշակութային - որոնք են այն իդեալները, որ կան տվյալ հասարակությունում

Նա նշեց, որ երբ հասարակության մեջ ընդունված նորմերից դուրս ենք գալիս, ապա առաջանում է գենդերային կոնֆլիկտ:

Իմանալով արդեն, թե ինչ է իրենից ներկայացնում գենդերը, անցկացվեց Խոֆստեդի աղյու-

Երիտասարդ խաղաղասերները կատարում են առաջադրանքներ

սակով թրեյնինգ, որի նպատակն էր պարզել, թե յուրաքանչյուր մասնակցի երկրում գենդերային որ մակարդակն է գերիշխում: Հարցերը վերաբերում էին ընդհանուր նորմերին, ընտանիքին, դպրոցին, աշխատանքին և քաղաքականությանը: Արդյունքում պարզվեց, որ և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը, և՛ Լեռնային Ղարաբաղը գտնվում են մասկուլին (տղամարդու վարքի ձև, այն, ինչ ավելանում է տղամարդու գենդերային դերի բարձրացման համար) մակարդակի վրա:

Այսինքն, այս երկրներում գերիշխում են նյութական արժեքները, հզորությունը, բարձր դիֆերենցիալ դերերը ընտանիքում, իշխանության մեջ և այլն:

Վերջում նա նշեց. *«Գենդերը խնդիր է, որից չի կարելի փախչել: Մեզ ասում են՝ եթե դուք խելացի եք, ինչո՞ւ են ձեր խորհրդարանում կանայք այդքան քիչ»:*

Հաջորդ թեման՝ «Հանդուրժողականության մշակույթի ընկալումը», ներկայացրեց Լիանա Բերիան («Համաձայնություն» ասոցացիա):

Նա հիմնականում անդրադարձավ ռուս-վրացական կոնֆլիկտին, դրա հետևանքներին, զոհերին, փախստականների խնդիրներին, ինչպես նաև վատթարագույն պայմաններին, որոնցում հիմա գտնվում են մարդիկ, որոնց մեջ շատ են երեխաները և կանայք:

Նշվեց, որ փախստականների ժամանակավոր օթևան են դարձել դպրոցները, մանկապարտեզները, տարբեր հիմնարկների ազատ տարածքները, և բնական է, որ նման պայմաններում անհնար է ապրել, այն էլ հիմա, երբ առաջիկայում ձմեռ է: Ներքին տեղահանվածների մեծ մասը տեղավորված են նաև վրաններում:

Վերջում նա ավելացրեց, որ իշխանությունների վարած սխալ քաղաքականությունից տուժում են ոչ թե իրենք, այլ հասարակ մարդիկ, որոնք մեղավոր չեն դրանում, և դառնում են կոնֆլիկտի հիմնական զոհերը:

Ընթացքում Արզու Աբդուլլաևան արտահայտեց հետևյալ միտքը. *«Երբեք մի ասեք այն ամենը, ինչ ցանկանում եք: Խոսքը վերաբերում է բացասականին: Պետք է հետաքրքրություն և էմպաթիա (ապրումակցում) ցուցաբերել: Եվ կարծրատիպերից հրաժարվելը շատ է պետք խաղաղասիրության համար»:*

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը ներկայացրեց «Քաղաքացիական հասարակության դերը հակամարտության խաղաղ լուծման գործում» թեման:

«Քաղաքացիական հասարակության ամենաբնորոշ գիծը բաց սահմաններն են, երբ ստեղծված է հանդուրժողության փոխհարաբերություն, վստահություն միմյանց նկատմամբ: Քաղաքացիական հասարակության համար շատ կարևոր է տեղեկատվության ազատությունը, ռազմավարության մշակումը, որպեսզի քաղաքացիական հասարակության աշխատանքն արդյունավետ լինի: Ժողովրդավարությունը հումանիտար օգնություն չէ, և քաղաքացիական հասարակությունը մասն է ցանկացած հասարակության: Քաղաքացիական հասարակությունը պետք է տեղեկացված լինի և մասնակցի որոշումների ընդունմանը»,- նշեց Ա. Սաքունցը:

Ա. Սաքունցի ելույթից հետո Արզու Աբդուլլաևան կազմակերպեց դերային խաղ, որի նպատակն էր ապագա խաղաղասերներին ծանոթացնել խաղաղասիրական գործընթացների տերմինաբանությանը: Նա նշեց, որ պատերազմական գործընթացների և դրանից հետո հարկ է օգտագործել այնպիսի բառեր և անել այնպիսի արտահայտություններ, որոնք վիրավորական չհնչեն հակառակորդ կողմի համար: Դերային խաղի ժամանակ նա նշեց, որ պետք է դիմացինի հետ հաղորդակցվել ավելի մեղմ տոնով: Երբեք չպետք է ասել այն ամենը, ինչ ասում են սովորաբար զայրույթի պահին:

Վերջում Արթուր Սաքունցը ներկայացրեց հետագա անելիքները, որոնք պետք է իրականացվեն ծրագրի շրջանակներում. պետք է իրականացվի հակամարտությունից տուժածների՝ փախստականների, անհայտ կորածների ընտանիքների և նախկին ռազմագերիների ու նրանց ընտանիքների իրավիճակի ուսումնասիրություն: Այնուհետև այն զեկույցի տեսքով կներկայացվի տարբեր մարմիններին: Կստեղծվի ինտերնետային էջ կամ բլոգ, ինչը հնարավորություն կընձեռի ապագա խաղաղասերներին հաղորդակցվել, կիսվել կարծիքներով, քննարկել խաղասիրությանը վերաբերող տարբեր թեմաներ:

Պատերազմից տուժածների շահերի պաշտպանության ուղիները

Երիտասարդ խաղաղասերները կրկին հանդիպեցին Թբիլիսիում 2008 թ. նոյեմբերի 23-26-ը:

Դասընթացի նպատակն էր երիտասարդ խաղաղասերներին ուսուցանել ուսումնասիրություն անցկացնելու հմտություններին, հարցազրույց վարելու տեխնիկային:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի քսանվեց երիտասարդ խաղաղասերներ:

Որպես ուսուցանողներ հանդես եկան «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի» նախագահ Արթուր Սաքունցը, «Հումանիտար հետազոտությունների ասոցացիայի» նախագահ Ավազ Հասանովը և «Մոլոդինի» հիմնադրամի ղեկավար Նինելի Ադրիաձեն:

Դասընթացի թեմաներն էին.

- պատերազմից տուժածների՝ փախստականների, նախկին ռազմագերիների և անհայտ կորածների հարազատների, խնդիրների ուսումնասիրության գործիքները և հարցազրույց վարելու տեխնիկան
- պատերազմից տուժածների՝ փախստականների, նախկին ռազմագերիների և անհայտ կորածների հարազատների հարցերով զբաղվող ազգային և միջազգային տարբեր կառույցները
- հասարակական կազմակերպությունների փորձը անհայտ կորածների և նախկին ռազմագերիների խնդիրների վերաբերյալ

«Պետք է նախ բացահայտել, թե ինչպիսի խնդիրներ ունեն հակամարտությունից տուժած մարդիկ, որպեսզի հետագայում որոշենք, թե ինչ կարելի է անել դրանց լուծման ուղղությամբ»,- հանդիպման ընթացքում երիտասարդ խաղաղասերներին նշեց «Հումանիտար հետազոտությունների ասոցացիայի» նախագահ Ավազ Հասանովը: Նա մասնակիցներին ծանոթացրեց ուսումնասիրություն իրականացնելու մեթոդներին և առանձնահատկություններին:

Հաշվի առնելով պատերազմից տուժածների՝ փախստականների, նախկին ռազմագերիների և անհայտ կորածների հարազատներից յուրաքանչյուրի առանձնահատկությունը՝ անհրաժեշտ է յուրաքանչյուր խմբի համար առանձնահատուկ մոտեցում մշակել:

«Մեր նպատակն է հասնել նրան, որ լինի հստակություն, թափանցիկություն հակամարտությունից տուժածների խնդիրները բացահայտելու, նրանց վերադարձման կամ այլ խնդիրներն առավել օբյեկտիվ լուծելու և աջակցելու վերաբերյալ»,- նշեց Արթուր Սաքունցը:

Երիտասարդ խաղաղասերները դերային խաղի ժամանակ

Ղարաբաղյան հակամարտության հետևանքով հարազատ, տուն կորցրած, գերեվարված մարդկանց հետ հանդիպումների ընթացքում երիտասարդ խաղաղասերները կծանոթանան ոչ միայն պատերազմից տուժածների կենցաղային պայմաններին, կզրուցեն նրանց հիմնախնդիրների՝ սոցիալական, առողջական, տնտեսական և հոգեբանական

դժվարությունների շուրջ, այլև կմշակեն դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները՝ հետագայում Հայաստանի և Ադրբեջանի պետական և միջազգային կառույցներին ներկայացնելու համար:

Հայ և ադրբեջանցի երիտասարդ խաղաղասերները տեղեկացան պատերազմական բախումների, հակամարտություններից տուժածների հարցերով զբաղվող միջազգային կառույցների գործունեության մասին: Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն, Classen Group-ը մեծ դեր են խաղում ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու, ինչպես նաև խաղաղասիրության տարածման ուղղությամբ:

Երիտասարդ խաղաղասերներին սեփական փորձը ներկայացրեց Վրաստանի «Մոլոդինի» (սպասում) հիմնադրամի ղեկավար Նինելի Ադրիաձեն:

Վրաց-աբխազական պատերազմից տուժածների խնդիրներով զբաղվող վրացական այս կազմակերպությունը մեծ աջակցություն է ցուցաբերել ինչպես վրացի, այնպես էլ աբխազ անհայտ կորածների ընտանիքների խնդիրների լուծման ուղղությամբ՝ համագործակցելով աբխազ գործընկերների հետ:

Երիտասարդ խաղաղասերների այցը «Անհայտ կորածների» թանգարան

Նինելի Ադրիաձեի գլխավորությամբ խաղաղասերների խումբը Թբիլիսիում այցելեց «Անհայտ կորածների» թանգարան, որտեղ Վրաստանի «Մոլոդինի» (սպասում) հիմնադրամի ղեկավարը ներկայացրեց այս տարվա օգոստոսին տեղի ունեցած ռուս-վրացական հակամարտությունից տուժածների մասին տեղեկություններ զոհերի լուսանկարները, ներկայացրեց խաղաղասիրական գործունեության իրականացման ուղիները:

Խաղաղասերների խումբը հանդիպման ընթացքում դիտեց հոլանդացի Սյուզան Կրոգերի «Հույսը վերջինն է մեռնում» ֆիլմը, որը ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած հայ, ղարաբաղցի և ադբեջանցի մարդկանց ընտանիքների սպասումների և հավատի մասին է:

Սեմինարի վերջում մշակվեց պատերազմական գործողություններից տուժածների խնդիրների ուսումնասիրման ժամանակացույցը՝ 2008թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2009թ. մարտի 31-ը:

Խմբային աշխատանքներ

Երիտասարդ լրագրողները հանուն խաղաղասիրության

2009 թվականի սեպտեմբերի 19-23-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում տեղի ունեցավ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի երիտասարդ հեռուստալրագրողների հանդիպում:

Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի երիտասարդ հեռուստալրագրողները և ծրագրի անձնակազմը

Հանդիպման նպատակն էր Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի երիտասարդ լրագրողներին ներգրավել խաղաղասիրական գործընթացներում՝ նրանց մասնակցությամբ բարձրաձայնել պատերազմի զոհերի հիմնախնդիրները: Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի ինը լրագրողները Թբիլիսիի «Ռե ստուդիա» ասոցացիայում համատեղ աշխատեցին նախապես նկարահանած հեռուստանյութերի վրա:

Արդյունքում ստացվեց երկլեզու՝ ադրբեջաներեն ու հայերեն ռեպորտաժներ՝ «Նախկին ռազմագերիները», «Փախստականները», «Անհայտ կորածները» թեմաներով:

«Նախկին ռազմագերիները» թեմայով հեռուստառեպորտաժներում հայ, ադրբեջանցի ու ղարաբաղցի նախկին ռազմագերիները պատմում են գերության իրենց պատմությունը՝ դառն անցյալի պատմության հետ զուգակցելով խաղաղ ապագայի անհրաժեշտությունը:

«Փախստականները» թեմայով հեռուստառեպորտաժներում հայ, ղարաբաղցի ու ադրբեջանցի փախստականները կարոտով են հիշում իրենց նախկին բնակավայրերը՝ մեկ անգամ ևս վերհիշելով գաղթի ճամփան:

«Ռե ստուդիա», Լեռնային Ղարաբաղի հեռուստալրագրողն աշխատում է իր նկարահանած հեռուստանյութի վրա

Անցյալի դառը հիշողությունները թեև թարմ են, բայց հակամարտող կողմի նկատմամբ թշնամությունն աստիճանաբար մարում է՝ փախստականների համար առաջնային դարձնելով խաղաղությունն ու առանց պատերազմի ապագան:

«Պատերազմից տուժածները» ֆիլմի կազմը

«Անհայտ կորածները» թեմայով հեռուստառեպորտաժները երեք տարբեր մարդկանց՝ հայ, ղարաբաղցի ու ադրբեջանցի անհայտ կորած զինվորների պատմությունն են ներկայացնում, թեև ցավը մեկն է ու շատ նման մյուսին: Անհայտ կորածների հարազատների համար անտանելին իրենց անհետ կորած զինվորի ճակատագրի անորոշությունն է: Անհայտ կորածների հարազատները հուսահատված են, սպասումը դարձել է անտանելի:

«Պատերազմից տուժածները» ֆիլմը ցուցադրվել է նաև «Համասփյուռ» ցանցով (Ալավերդու «Անկյուն+3» Վանաձորի «Լոռի TV», Գյումրիի «Գալա», Նոյեմբերյանի «Քամուտ» Սեւանի «STV1» Աբովյանի «Աբովյան» Արմավիրի «Ալտ», Կապանի «Սոս» հեռուստաընկերություններով), ինչպես նաև ներկայացված է www.youtube.com/watch?v=NVRv0fnbhuo/ համացանցում:

Երիտասարդ խաղաղասերների ինտերնետային կայքը

Խաղաղասիրությանն առնչվող թեմաներ, հայ-ադրբեջանական հարաբերությունների ձևավորում, կարծիքների փոխանակում, երկխոսության հաստատում և զարգացում Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Այս ամենին նպաստեց ծրագրի շրջանակներում ստեղծված www.hcav.am/blog-ը:

Բլոգը ստեղծվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինտերնետային էջի տիրույթում:

Բլոգում տեղադրված են ծրագրի շրջանակներում իրականացված հանդիպումների մասին նյութեր, խաղաղասերների լուսանկարներ, ծրագրի մասին հակիրճ տեղեկատվություն:

Հայ, ադրբեջանցի և ղարաբաղցի խաղաղասերներն արդեն գրանցված են բլոգում, որտեղ քննարկում են խաղաղասիրությանն առնչվող թեմաներ, տեղեկանում աշխարհում ընթացող խաղաղասիրական գործընթացներին:

Բլոգը պարբերաբար թարմացվում է ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների և աշխարհում տեղի ունեցող խաղաղասիրությանն ուղղված հանդիպումների մասին տեղեկատվությամբ:

www.hcav.am/blog-ը համարվում է փակ համակարգ, որտեղ միայն գրանցված են խաղաղասերներն ու ծրագրի աշխատակիցները: Նրանցից յուրաքանչյուրը կարող է նախաձեռնել մի նոր թեմայի քննարկում, հայտնել իր կարծիքը տարբեր երևույթների նկատմամբ, մյուս անդամներին իրազեկել խաղաղասիրության մասին տարբեր նորություններին, իրադարձություններին, սեփական նախաձեռնությամբ տեղադրել տարբեր նյութեր: Բլոգում խաղաղասերների քննարկումներին կարող են մասնակցել նաև էջի այցելուները՝ առանց սեփական թեման բացելու՝ կիսելով իրենց կարծիքներն ու տեսակետները:

Բլոգը բաղկացած է 4 բաժիններից՝ քաղաքականություն, մշակույթ, հասարակություն և սպորտ:

Մինչև հիմա բլոգում 20 նյութ է տեղադրված, և ավելի քան 512 մեկնաբանություններ են արվել:

ԳԼՈՒԽ 2

Պատերազմական գործողություններից տուժածների խնդիրները

Երիտասարդ խաղաղասերների ուսումնասիրությունները

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայացնում ենք Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի երիտասարդ խաղաղասերների բրիգադի անդամների կողմից ղարաբաղյան կոնֆլիկտից տուժած քաղաքացիների խնդիրների ուսումնասիրությամբ արդյունքները:

Նրանցից շատերը որևէ փորձ չունեին կոնֆլիկտից տուժածների՝ անհայտ կորածների ընտանիքների, նախկին ռազմագերիների և փախստականների խնդիրների ուսումնասիրության և շահերի պաշտպանության բնագավառում:

Գրքույկում ներկայացված են և՛ ուսումնասիրության ընթացքում բացահայտված խնդիրները, և՛ նրանց լուծման նպատակով կատարված քայլերի նկարագրությունը:

Իհարկե, չենք հավակնում, որ երիտասարդ խաղաղասերների կատարած ուսումնասիրությունները ամբողջական են, սակայն հիմնական նպատակն էր երիտասարդներին ոչ միայն ծանոթացնել մարդկային ճակատագրերում կոնֆլիկտի հետևանքներին, այլև դրանց ուսումնասիրման մեթոդներին և կոնֆլիկտից տուժածների խնդիրների լուծման ուղղությամբ հնարավոր քայլերին:

Այնուամենայնիվ, կարելի է գալ եզրահանգման, որ, չնայած այս ուսումնասիրությունների սահմանափակ ներկայացուցչական լինելուն, վեր հանված խնդիրների բնույթը հիմնականում նույնն է, ինչ նմանատիպ այլ ավելի որակյալ և լայնածավալ ուսումնասիրությունների դեպքում:

Այս ծրագրի կարևոր խնդիրներից մեկն էր նաև օգնել հակամարտության մեջ գտնվող կողմերի երիտասարդներին՝ հասկանալու կոնֆլիկտից տուժածների խնդիրները Հայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում:

ԱԴՐԲԵՋԱՆ

** Նյութը տրամադրել է ՀՔԱ Ադրբեջանի ազգային կոմիտեն*

Պահպանված է հեղինակների կողմից օգտագործված ձևակերպումները:

Չնայած որոշ ձևակերպումների հետ մեր անհամաձայնությանը՝ պահպանել ենք հեղինակային իրավունքը:

Անհայտ կորածներ

Ուսումնասիրությունն իրականացվել է հայ-ադրբեջանական պատերազմում քսան անհայտ կորածների հարազատների շրջանում: Ուսումնասիրության մասնակիցները եղել են կամ ծնողներ, կամ անհայտ կորածների հարազատներ /եղբայր, քույր և այլն/: Բոլորը եղել են գրավված շրջաններից:

Անհետանալու ժամկետները տարբեր են՝ 1990թ. մինչև 1994թ.: Օրինակ, 1990թ. ապրիլի 13-ին, 1991թ. օգոստոսի 27-ին, 1992թ. հունվարի 26-ին, փետրվարի 11-ին, մայիսի 8-10, 1993թ. օգոստոսի 7-ին, 1994թ. հունվարի 4-ին և այլն:

Անհայտ կորածների բոլոր հարազատները տեղեկացված են եղել իրենց հարազատի անհետանալու մասին: Իրավիճակները և անհետացման վայրերը նույնպես եղել են տարբեր: Նրանք անհետացել են կռվի ժամանակ, ճանապարհին, ծառայության ընթացքում և այլն:

Հարազատներից շատերը մինչև հիմա չունեն կոնկրետ տեղեկություն իրենց հարազատի գտնվելու վայրի մասին: Ժամանակ առ ժամանակ նրանք ստացել են որոշ տեղեկություններ, բայց առանց որևէ կոնկրետ արդյունքի:

Եթե ավելի կոնկրետ, ապա տեղեկություններն անհետացման մասին եղել են ստույգ, իսկ հանգամանքները և պատճառները, որոնց հետևանքով անհետացել են, ավելի ուշ են ճշտվել:

Որոնողական աշխատանքներով զբաղվել են շատերը: Հիմնականում ծնողները, անհայտ կորածների հարազատները, պետական կառույցները (օրինակ, Պաշտպանության նախարարությունը, պետական հանձնաժողովը), առանձին հասարակական կազմակերպություններ և անհատներ (օրինակ, ՀՔԱ-ն և Արզու Աբդուլլաևան):

Հիմնականում բոլոր անհայտ կորածները համարվում են մահացած: Դա ունի մի քանի պատճառ. առաջինը, օրենսդրության համաձայն, որոշակի ժամանակահատված հետո այդ մարդիկ ճանաչվում են մահացած: Երկրորդը՝ մահացածի կարգավիճակը ավելի լայն հնարավորություն է տալիս նրանց ընտանիքի անդամներին լուծելու սոցիալական խնդիրներ, քան անհայտ կորածի կարգավիճակը: Այդ պատճառով հարազատները հիմնականում համաձայնվում են մահացածի կարգավիճակի հետ, և շատ դեպքերում նաև ամեն ինչ անում են այդ կարգավիճակը ստանալու համար:

Համարյա բոլոր հարցվողները նշում են, որ իրենց հարազատին մահացած ճանաչելու համար անհրաժեշտություն չի եղել դիմել դատարան. այդ հարցը լուծվել է առանց դատարանի:

Չնայած, որ նրանք դիմում են այդ քայլին՝ մահացած են ճանաչում իրենց հարազատներին, նրանք չեն կորցնում հույսը, որ իրենց հարազատը մի օր կվերադառնա:

Անհայտ կորածների հարազատները, ինչպես նաև մահացած ճանաչվածների ընտանիքները ամենամյա սոցիալական օգնություն են ստանում պետությունից:

Անհայտ կորածների հարազատները գտնում են, որ որոնողական աշխատանքները բա-

վարար չափով չեն իրականացվում: Նրանք պահանջում են որոնողական աշխատանքները ուժեղացնել, հակառակ կողմից ճշտել կենդանի և մահացած մարդկանց մասին տեղեկությունները:

Հարազատներն առաջարկում են ստեղծել համատեղ հասարակական հանձնաժողով, որը կզբաղվի միայն որոնողական աշխատանքներով, և իրենք էլ կընդգրկվեն այդ հանձնաժողովի կազմում:

Անհայտ կորածների հարազատների խնդիրները

Կոնֆլիկտի ընթացքում, հատկապես հայերի կողմից զինված հարձակումների ժամանակ, որոնց օգնում էին նաև ռուսները, երբ հարձակումներ էին իրականացվում անպաշտպան ադրբեջանական բնակավայրերի վրա, անհայտ կորածների թիվը հասավ մի քանի հազարի: Պետական հանձնաժողովի տվյալներով այսօր նրանց թիվը հասնում է 5.500 մարդ:

Մեծ մասը անհետացան ադրբեջանական Խոջալի քաղաքում: Այնտեղ, պաշտոնական տվյալներով, մահացան 613 մարդ, անհետացան հազարավոր անմեղ մարդիկ:

Բացի այդ, բոլոր գրավված քաղաքներում և շրջաններում՝ Ասկերան, Խանքենդի, Շուշի, Խոջալի, Լաչին, Քելբաջար, Աղդամ, Ֆիզուլի, Զաբրայիլ, Զանգելան, Գուբադլի և Թերթերի շրջանի մի փոքր տարածք, եղել են մարդկանց անհետացման դեպքեր:

Ղարաբաղյան պատերազմում մարդիկ կորել են նաև Ադրբեջանի այլ քաղաքներից և շրջաններից: Նրանք մասնակցել են Ադրբեջանի հանրապետությանն ուղղված հայ-ռուսական ուժերի հարձակումների դեմ պայքարին: Անհայտ կորածների մի մասը՝ 6.000 հազար անհայտ կորածներ, համարվում են խաղաղ բնակիչներ:

Կան ընտանիքներ, որոնք մինչ օրս չունեն կարգավիճակ, բայց դրանց թիվը շատ փոքր է, և հիմա համապատասխան աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ:

Ուսումնասիրության մասնակիցներից ոմանք կարևորում են անհայտ կորածի մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Ներկայումս մահացածների ընտանիքներն ամսական ստանում են 100 մանաթ (125 $), իսկ երեխաները սովորում են անվճար հիմունքներով:

Խնդիրներ, որոնք ի հայտ եկան հարցումների ժամանակ

- հոգեբանական - որոշ մարդիկ հոգեբանական աջակցության կարիք ունեն
- սոցիալական - նրանք գտնում են, որ գոյություն ունեցող սոցիալական պաշտպանության համակարգը, նաև տարեցտարի բարելավվում է: Բայց անհրաժեշտ է բարելավել այն: Բյուրոկրատական խնդիր: Ըստ հարցման մասնակիցների՝ օրենքները լավն են, բայց բյուրոկրատիան փչացնում է դրանք:
- բնակարանային - այս խնդիրը առկա է Ադրբեջանում, բայց աստիճանաբար այն նվազում է: Անհայտ կորածների շատ ընտանիքներ համարվում են նաև բռնի տեղահանվածներ, և պետությունը նրանց ապահովում է բնակարաններով: Կառուցվել են մի շարք բնակավայրեր Խոջալուի, Աղդամի, Ֆիզուլիի, Զաբրայիլի և այլ շրջանների բնակիչների համար: Մեծ քաղաքներում խնդիրները մինչև հիմա մնում են չլուծված:
- զբաղվածության - անհայտ կորածների ընտանիքները ցանկանում են, որպեսզի իրենց համար լինի աշխատանքի ընդունման ավելի դյուրացված համակարգ
- իրավական - անհայտ կորածների հարազատներից շատ փաստաթղթեր են պահան-

ջում անհրաժեշտության դեպքում: Նրանք ցանկանում են, որպեսզի միայն պետության կողմից տրված անձը հաստատող փատաթուղթը լինի բավարար:

- կրթական - անհայտ կորածի ընտանիքի անդամները կարողանան անվճար կրթություն ստանալ

Հարցումներին մասնակցած 20 անհայտ կորած ընտանիքները համարվում են նաև փախստականներ և բռնի տեղահանվածներ: Համարյա բոլորն ապահոված են աշխատանքով. աշխատում են տարբեր ոլորտներում և ստանում են տարբեր չափի աշխատավարձեր: Նրանք բոլորն ամուսնացած են և ունեն երեխաներ: Երեխաները հիմնականում ստանում են անվճար կրթություն: Նրանք, ովքեր սովորում են վճարովի հիմունքներով, կարողանում են գտնել հովանավորներ:

Հարցումներին մասնակցածները հիմնականում գոհ են իրենց բնակարանային պայմաններից: Ոմանք ունեն բնակարաններ, մյուսներին էլ պետությունը ապահովել է կացարաններով՝ բազմասենյականոց բնակարաններ, առանձին սենյակներ հանրակացարաններում և առանձին տնակներ:

Ուսումնասիրության բոլոր մասնակիցները պետության կողմից ստացել են տարբեր տեսակի օգնություն՝ ֆինանսական, անվճար բուժում, տարբեր կոմունալ վարձերից ազատում և այլն:

Հասարակության վերաբերմունքը անհայտ կորածների ընտանիքների նկատմամբ հիմնականում ուշադիր է և բարեսիրտ, բայց առկա է նաև անտարբեր վերաբերմունք: Նրանք հիմնականում դժգոհում են պաշտոնյաների բյուրոկրատիայից:

Անհայտ կորածների հարազատները գտնում են, որ իրենց խնդիրների լուծման համար կարևոր է հասարակական կազմակերպությունների հետ համագործակությունը, ինչպես նաև նոր հասարակական կազմակերպությունների ստեղծումը, որը կօգնի ավելի արդյունավետ լուծել խնդիրները: Նրանք գտնում են, որ օրենսդրական որոշ փոփոխություններ կօգնեն լուծել մի շարք խնդիրներ:

Եզրակացություն

Ծրագրի շրջանակներում իրականացված հարցումները ցույց տվեցին, որ անհայտ կորածների թիվը հասնում է 6,000, որը պահանջում է ունենալ նրանց խնդիրների լուծման նպատակով համապատասխան օրենսդրություն:

Մինչև հիմա չկա անհայտ կորածի մասին առանձին օրենք, չկա ոչ մի փաստաթուղթ, որը կկարգավորի այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են անհայտ կորածներին և նրանց ընտանիքներին, որով կսահմանվի նրանց կարգավիճակը, ինչպես նաև այն բոլոր արտոնությունները, որոնք կապահովեն սոցիալական աջակցություն այդ մարդկանց հարազատներին:

Բոլոր անհայտ կորածները, որոնց անհետացումը պետությունը ճանաչել է, համարվում են մահացածներ, և պետության կողմից համապատասխան փաստաթուղթ են ստանում, որն էլ հնարավորություն է տալիս օգտվել տարբեր արտոնություններից:

Մեր հարցումների ժամանակ անհայտ կորածների հարազատները ցանկություն հայտնեցին, որպեսզի պետությունը ընդունի անհայտ կորածի մասին առանձին օրենք: Այդ օրենքի ընդունումը հարազատների համար կլինի և՛ բարոյական, և՛ իրավական աջակցություն: Օրենքի ընդունումը անհայտ կորածների հարազատներին կտրամադրի ավելի լայն հնարավորություններ, այդ թվում անհայտ կորածի հարազատների սոցիալական աջակցության բնագավառում:

Այսպիսով, կարելի է առանձնացնել անհայտ կորածների ընտանիքներին աջակցության հետևյալ բնագավառները.

- հոգեբանական - այդ մարդիկ ունեն հոգեբանական աջակցության կարիք: Նրանք ցանկանում են ազատվել ցավի զգացումից
- սոցիալական - ամենամեծ խնդիրը, որը խանգարում է այդ մարդկանց, պաշտոնյաների բյուրոկրատիան է: Նրանք ցանկանում են ունենալ սոցիալական պաշտպանության այնպիսի համակարգ, որը նրանց երաշխիք կտա զերծ մնալու արհեստական քաշքշուկներից
- բնակարանային - առաջին հերթին պետք է լուծել բնակարանային խնդիրները, արտոնություններ սահմանել բնակարաններ ձեռքբերելու, վերանորոգում կատարելու համար
- զբաղվածության - այս մարդիկ պետք է ունենան արտոնություններ աշխատանքի ընդունման ժամանակ
- իրավական - անհրաժեշտ է դյուրին համակարգ իրավական խնդիրների լուծման համար

Բռնի տեղահանվածներ

Ադրբեջանի օրենսդրության համաձայն՝ այն մարդիկ, որոնք ստիպված թողել են իրենց բնակավայրերը կամ որոնց աքսորել են իրենց տներից, բաժանվում են 2 խմբի՝ փախստականներ և բռնի տեղահանվածներ:

Փախստականներ են համարվում մարդիկ, որոնք եկել են Ադրբեջան այլ երկրներից, օրինակ Հայաստանից: Իսկ բռնի տեղահանվածներ անվանում են նրանց, ովքեր բնակվել են Ադրբեջանի Հանրապետության տարածքում, օրինակ Լեռնային Ղարաբաղում, սակայն ստիպված են եղել թողնել իրենց բնակավայրերը և ապաստան գտնել Ադրբեջանի այլ շրջաններում:

Հարցումներն իրականացվել են քսան բռնի տեղահանվածների շրջանում, որոնք գաղթել են Լեռնային Ղարաբաղից: Մինչ տեղահանվելը, նրանք բնակվել են Շուշի, Ֆիզուլի, Լաչին, Ջաբրայիլ, Խոջավենդ, Աղդամ քաղաքներում:

Նրանց մեծ մասը ապահոված են աշխատանքով, բայց ոմանց մոտ այդ աշխատանքը ժամանակավոր բնույթի է և ոչ կայուն:

Նրանցից շատերն ամուսնացած են և ունեն երեխաներ:

Մինչ բռնի տեղահանված դառնալը նրանք աշխատում էին կամ սովորում: Տեղահանվելուց հետո նրանցից շատերը փոխեցին իրենց մասնագիտությունը:

Ոմանք հանդիսանում են հասարակական կազմակերպությունների անդամներ: Հարցվողներից շատերն ունեն բարձրագույն կրթություն:

Երբ և ինչ պայմաններում դարձաք բռնի տեղահանվածներ

- 1992թ. մայիսի 8-ին, երբ հայ-ռուսական զորքերը գրավեցին Շուշի քաղաքը
- 1993թ. օգոստոսի 23-ին, երբ հայ-ռուսական զորքերը գրավեցին Ֆիզուլիի շրջանը
- 1993թ. հուլիսի 23-ին, երբ հայ-ռուսական զորքերը գրավեցին Աղդամի շրջանը
- 1993թ. օգոստոսի 23-ին, երբ հայ-ռուսական զորքերը գրավեցին Ջաբրայիլի շրջանը
- 1992թ. մայիսի 18-ին, երբ հայ-ռուսական զորքերը գրավեցին Լաչինը
- 1993թ-ին, երբ հայ-ռուսական զորքերը գրավեցին Խոջավենդը

Սկսած 1991թ. մինչև 1993թ. հայկական զորքերը ռուսական ուժերի հետ միասին մեկը

մյուսի հետևից գրավեցին ադրբեջանական շրջանները: Իրադարձություններն այնքան արագ զարգացան, որ մարդիկ չկարողացան վերցնել իրենց հետ ոչինչ, միայն փորձում էին փրկվել:

Սկզբից նրանք բնակություն հաստատեցին տարբեր շրջաններում հարազատների մոտ, հետո հաստատվեցին տարբեր տարածքներում արդեն երկար ժամանակով:

Բնակարանային պայմանները

- հանրակացարաններ գործարանում, 3 սենյակ, միջին պայմաններ
- ապրում է հարուստ մարդու ագարակում, ամեն ինչ նորմալ է, բայց քաղաքից շատ հեռու է, չկա քաղաքային հեռախոս և այլ պայմաններ
- սեփական տուն, 3 սենյակ, մեծ պատշգամբ, հողատարածք
- հանրակացարան ինստիտուտում, ոչ մի պայման չկա, ընդհանուր է ամեն ինչ
- սեփական տուն, 2 սենյակ, 1 պատշգամբ, փոքրիկ տարածք, միջին պայմաններ

Համարյա բոլոր հարցվողները դժգոհ են իրենց բնակարանային պայմաններից, նրանք ազատված են կոմունալ բոլոր վարձերը վճարելուց: Միակ խնդիրն այն է, որ բոլոր բռնի տեղահանվածների ընտանիքի անդամները վերջին տարիներին ավելացել են, և, բնականաբար, նրանց չի բավականացնում տարածքը:

Բռնի տեղահանվածի կարգավիճակի ձեռքբերումը

Կարգավիճակ ձեռք են բերել առանց դժվարության և շատ արագ:

Բռնի տեղահանվածներից շատերն օգտվում են իրենց իրավունքներից, և դրա մասին նրանք տեղեկանում են հեռուստատեսությունից, թերթերից, հասարակական կազմակերպություններից:

Պետությունն ամենամյա ֆինանսական աջակցություն է ցուցաբերում բռնի տեղահանվածներին. ընտանիքի յուրաքանչյուր անդամ ստանում է 13.5 մանաթ, Օրինակ, 6 հոգուց բաղկացած ընտանիքը ստանում է մոտավոր 100 ԱՄՆ դոլար:

Հասարակությունը հիմնականում բռնի տեղահանվածներին վերաբերվում է հարգալից, բայց նրանք դեռ ունեն զբաղվածության, բնակարանային ապրուստի և այլ խնդիրներ:

Եզրակացություններ

ՀՔԱ Ադրբեջանի ազգային կոմիտեի հարցումները և ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դեռևս անհրաժեշտություն կա սահմանադրության մեջ փոփոխություններ կատարել բռնի տեղահանվածների խնդիրների լուծման համար: Դրանք են.

- բնակարանային - բոլոր բռնի տեղահանվածներին ապահովել բնակարաններով
- սոցիալական - բռնի տեղահանվածների և ընտանիքի անդամների համար ստեղծել ավելի մատչելի սոցիալական ապահովության համակարգ՝ հաշվի առնելով փաստաթղթերի անհրաժեշտությունը, որը մնացել է ծննդավայրում
- կրթական - մեծ մասամբ բռնի տեղահանվածները կարիք ունեն կրթություն ստանալու: Իրազեկման մակարդակը ցածր է, և անհրաժեշտ է իրականացնել սեմինարներ, կլոր սեղաններ, միաժամանակ անցկացնել մշտական աշխատանք՝ բացատրելու բռնի տեղա-

հանվածների իրավունքները և պարտականությունները

- հոգեբանական - անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել՝ ուղղված հոգեբանական աջակցությանը և հասարակության մեջ ինտեգրմանը, ներգրավել հենց բռնի տեղահանվածներին իրենց խնդիրների լուծման մեջ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

Անհայs կորածների ընsանիքների խնդիրները Լեռնային Ղարաբաղում

Անհայտ կորած զինվորների հարազատների խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է Ստեփանակերտում բնակվող անհայտ կորածների հինգ ընտանիքների անդամների հետ հարցազրույցների միջոցով:

Անհայտ կորածների հարազատներից երեքն ունեն բարձրագույն կրթություն, մեկը՝ թերի բարձրագույն, մեկը՝ միջնակարգ կրթություն:

Անհայտ կորածների հարազատների թվում էին երկու ծնող, երեք անհայտ կորածի կին: Մինչ անհետանալը անհայտ կորածներից չորսը ամուսնացած էին, որոնցից երեքը ունեն երեխաներ: Երեխաներն ապրում են իրենց մայրերի հետ:

Անհայտ կորչելու հանգամանքները և փնտրման աշխատանքները

Ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված հինգ անհայտ կորածները անհետացել են 1992-1993 թթ.:

Անհետանալու մասին հարազատները տեղեկացել են անմիջապես՝ անհայտ կորած զինվորի հետ ծառայողներից, ռազմական գործողությունների տարածքում գտնված բնակավայրի բնակիչներից:

Անհայտ կորած ազատամարտիկների փնտրման աշխատանքներով զբաղվել են ընտանիքի անդամները, ընկերները և պաշտպանության նախարարության աշխատակիցները:

Անհետանալու հանգամանքների, գտնվելու հնարավոր վայրի, ինչպես նաև ճակատագրի վերաբերյալ տարաբնույթ տեղեկություններից ոչ մեկը չի հաստատվել:

Հարազատներից մեկը նշում է. *«Տեղեկություն ունեինք, որ գտնվում է Կիրովաբադի հիվանդանոցում, հետո լուրեր կային, որ տարել են Թուրքիա՝ շինարարությունում աշխատեցնելու համար»:*

Ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված հինգ անհայտ կորած հարազատներից երկուսն անհետանալուց միայն վեց ամիս անց պետական մարմիններից ստացել են փաստաթուղթ անհետացման մասին, երեքը՝ մինչ օրս որևէ պաշտոնական գրություն չեն ստացել անհետանալու մասին: Անհայտ կորածներից չորսին պետությունը ճանաչել է մահացած:

Միևնույն ժամանակ հարազատները ակնկալում են հստակ տեղեկություններ ստանալ իրենց անհայտ կորածի ճակատագրի և գտնվելու վայրի մասին. *«Եթե ասում են, որ դեռ կենդանի մարդիկ կան, կամ որ գտնվում են այստեղ կամ այնտեղ, միգուցե ճիշտ է, «առանց կրակի ծուխ չի լինում»»:*

Անհայտ կորածների ընանիքների բնակարանային պայմանները

Ուսումնասիրության մեջ ընդգրկված անհայտ կորածների բոլոր հինգ ընտանիքների անդամները դժգոհում են իրենց բնակարանային պայմաններից, որը գլխավորապես պայմանավորված է բնակարանների վերանորոգման և բարեկարգման անհրաժեշտությամբ:

Անհայտ կորածի կինը նշում է. *«Դիմել եմ համապատասխան մարմինների, որ գոնե մի փոքր վերանորոգեն բնակարանս: Բայց նրանք եկան մեր տուն և որոշեցին, որ բնակարանը վերանորոգման կարիք չունի»:*

Մեկ այլ անհայտ կորածի ծնող նշում է. *«1992թ.-ի օգոստոսի 2-ից տունս վթարային է չորրորդ կարգի, քաղաքապետարանը եկավ միայն պատերը սարքեց: Հետո էլի դիմեցի քաղաքապետարան, ասեցին, թե մի անգամ նորոգել ենք, էլ բյուջեում գումար չունենք»:*

Անհայտ կորածների ընտանիքների սոցիալական խնդիրները

Ուսումնասիրության մեջ ընդգրված հինգ անհայտ կորածների հարազատները (կին, ծնող) ամսական ստանում են 7.500 դրամ՝ որպես կոմունալ վճարների փոխհատուցում: Այս աջակցությունից բացի, Լեռնային Ղարաբաղում անհայտ կորածների ընտանիքները այլ տեսակի աջակցություն չեն ստանում:

Ներկայումս երեխաներից չորսը ստանում են բարձրագույն կրթություն, մեկը անվճար հիմունքներով՝ որպես զոհված ազատամարտիկի զավակ:

Պետությունը չունի անհայտ կորածների երեխաների աշխատանքի տեղավորման վերաբերյալ մոտեցումներ: Ինչպես նշում է հարազատներից մեկը. *«Եթե համապատասխան արտոնություններ չկան անհայտ կորածների երեխաների համար, ապա գոնե լինի անգործության նպաստ այնքան ժամանակ, մինչև աշխատանք գտնեն»:*

Անհայտ կորածի ընտանիքները պետական աջակցություն ստանալու համար ստիպված են դատական կարգով մահացած ճանաչել իրենց հարազատին, որպեսզի ձեռք բերեն զոհվածի ընտանիքի կարգավիճակ:

Անհայտ կորածների ծնողներից, կանանցից միայն երեքն են ապահովված աշխատանքով:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձևակերպվեցին հետևյալ խնդիրները.

- սահմանել անհայտ կորածի իրավական կարգավիճակ
- մշակել պետական ծրագրեր՝ անհայտ կորածների հարազատների, ընտանիքի անդամների սոցիալական և առողջապահական խնդիրների լուծման նպատակով
- մշակել անհայտ կորածների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ծրագիր

Փախստականների հիմնախնդիրները Լեռնային Ղարաբաղում

Ուսումնասիրությունն իրականացվել է քսան փախստականների շրջանում, որոնցից տասնինը բնակվում են Ստեփանակերտում, մեկը՝ Ասկերանի շրջանի Շոշ գյուղում:

Նրանցից վեցն ունեն բարձրագույն կրթություն, երկուսը՝ թերի բարձրագույն, մնացած տասներկուսը՝ միջնակարգ կրթություն:

Ուսումնասիրության շրջանում ընդգրկված փախստականներից որևէ մեկը չի մասնակցում հասարակական կամ քաղաքական որևէ կառույցի գործունեությանը:

Քսան փախստականներից տասներկուսի բնակության նախկին վայրը հանդիսացել է Բաքուն, երեքինը՝ Սումգայիթը, մեկինը՝ Բարդան:

Ուսումնասիրությանը մասնակցած քսան փախստականներից տասնվեցը ամուսնացած են: Փախուստից հետո նոր բնակավայրում տասնյոթ հոգու ընտանիքի անդամների թիվը ավելացել է:

Ուսումնասիրությանը մասնակցածների տասնմեկ երեխաներն ունեն բարձրագույն կրթություն,

Ուսումնասիրությանը մասնակցած միայն հինգ փախստական է մասնակցել վերապատրաստման դասընթացների:

Փախուստի դիմելու հանգամանքները և փախստականի կարգավիճակի ձեռք բերումը

1988թ. փետրվարին Սումգայիթում, 1990թ. հունվարին Բաքվում անկարգություններից, ոտնձգություններից, սպանություններից խուսափելու նպատակով գաղթել են Լեռնային Ղարաբաղ:

Քսան փախստականից յոթը կարողացել են մինչ փախուստը փոխանակել բնակարանը: Մյուս մասը չի հաստրել ոչինչ վերցնել, բացի անձնական հագուստից:

Փախուստից անմիջապես հետո տասներկու փախստական տեղափոխվել են Ստեփանակերտ, որտեղ բնակվում են մինչ օրս: Սկզբնական շրջանում պատսպարվել են հանրակացարաններում (4 հոգի), հարազատների մոտ (1 հոգի), ինչպես նաև վարձակալած բնակարաններում (3 հոգի):

Հարցումներին մասնակցած քսան փախստականներից ինը կարգավիճակ են ստացել 2004-2005 թթ., երեք հոգի ստացել են 1988-1991թթ., հինգ հոգի մինչ օրս չի ստացել փախստականի կարգավիճակ, երկու հոգի չի հիշում ստացել է կարգավիճակ, թե ոչ: Փախստականի կարգավիճակ ստացել են առանց որևէ խոչընդոտների:

Փախստականների զբաղվածության վիճակը

Ուսումնասիրության մեջ ընդգրկված փախստականներից ինն ապահովված են աշխատանքով: Նրանք աշխատում են տարբեր բնագավառներում՝ կրթական, պետական, տնտեսական:

Նվազագույն աշխատավարձի չափը կազմում է 21.500 դրամ (մոտ 53 ԱՄՆ դոլար), առավելագույնը՝ 95.000 դրամ (մոտ 230 ԱՄՆ դոլար): Աշխատանք ունեցողների հիմնական մասի աշխատավարձը կազմում է 48.000-74.000 դրամ (մոտ 120-180 ԱՄՆ դոլար):

Չնայած փախստականների մոտ 40 տոկոսի զբաղվածությանը, մոտ կեսը դեռևս չունի հիմնական աշխատանք:

Փախստականների բնակարանային պայմանները

Քսան փախստականներից ինը բնակվում են հանրակացարաններում և վարձակալված բնակարաններում, տասնմեկը ունեն սեփական բնակարան: Չնայած քսան փախստականներից ինը բնակվում են հանրակացարաններում և վարձակալված բնակարաններում, տասնմեկը՝ սեփական բնակարաններում, այնուամենայնիվ, նրանց մեծ մասը դժգոհ են իրենց բնակարանային պայմաններից:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված քսան փախստականներից միայն մեկին է պետությունը հատկացրել բնակարան, ևս երեք հոգուն խոստացել է ապահովել բնակարանով:

Փախստականների ինը բազմանդամ ընտանիքներ (երեք և ավելի երեխա ունեցողներ) բնակվում են երկու-երեք սենյականոց բնակարաններում, որն ակնհայտորեն չի բավարարում նորմալ բնակության պայմաններին:

Փախստականների սոցիալական աջակցության և ինտեգրման խնդիրները

Ուսումնասիրության մեջ ընդգրկված փախստականները նշում են լեզվական խնդիրները ինտեգրման տեսակետից: Հասարակության վերաբերմունքը փախստականների նկատմամբ տարբեր է. մի կեսը նշում է անտարբեր, մյուս կեսը՝ հարգալից և հոգատար վերաբերմունք:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված բոլոր փախստականները հասարակության մեջ լիովին ինտեգրվելու խոչընդոտող գործոն համարում են սոցիալական խնդիրների չլուծվածությունը (երեք հոգի բնակարան չունենալը, յոթ հոգի աշխատանք չունենալը, հինգը սոցիալական և տնտեսական վիճակի բարելավումը, մեկը երիտասարդների աշխատանք չունենալը):

Բոլոր քսան փախստականներն էլ նշել են, որ չգիտեն իրենց իրավունքների մասին և չգիտեն էլ, թե որտեղից կարելի է իմանալ:

Փախստականները կարևորում են պետության կողմից աջակցությունը և ուշադրությունն իրենց խնդիրների նկատմամբ:

Քսան փախստականներից միայն երկուսն են պետության կողմից մեկական անգամ ստացել ֆինանսական աջակցություն, մեկ հոգու մեկ անգամ տրամադրվել է դեղորայք:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձևակերպվեցին հետևյալ խնդիրները

- մշակել փախստականներին բնակարաններով ապահովելու ծրագիր
- իրականացնել փախստականների լեզվական ուսուցման ծրագրեր
- աշխատանքի ընդունման դյուրացված համակարգ՝ հաշվի առնելով լեզվական խնդիրները
- բարձրացնել փախստականների իրազեկման մակարդակը իրենց իրավունքների մասին

Նախկին ռազմագերիների խնդիրները Լեռնային Ղարաբաղում

Նախկին ռազմագերիների խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է տասը նախկին ռազմագերիների հետ հարցազրույցների միջոցով:

Նրանցից երկուսը բնակվում են Ստեփանակերտում, ութը՝Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղում:

Հարցումներին մասնակցած տասը նախկին ռազմագերիների տարիքը 40 մինչև 75 տարեկան է: Նրանցից ութն ունեն միջնակարգ կրթություն, երկուսը՝ բարձրագույն կրթություն: Բոլորն էլ ամուսնացած են: Նախկին ռազմագերիների ինը երեխաներից յոթը սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ անվճար հիմունքներով:

Գերի ընկնելու հանգամանքները

Նախկին ռազմագերիների գերեվարումը տեղի է ունեցել թե՛ կոնֆլիկտի սկզբում, թե՛ պատերազմական գործողությունների ընթացքում: Ընդ որում, առաջին գերեվարումը տեղի է ունեցել նախկին Խորհրդային իշխանության օրոք:

Մասնավորապես, նախկին ռազմագերիներից մեկը նշում է. *«Օմոնականները կանգնեցրեցին մեր մեքենան և սկսեցին ստուգել: Դիտավորյալ մեքենան փամփուշտներ գցելով՝ մեզ տարան Շուշիի բանտ, ապա Բաքու, հետո էլ Աղդամ»:*

Աստղաշեն գյուղի ռազմագերիները գերեվարվել են 1991թ. մայիսի 15-ին. *«Առավոտյան բոլորիս հավաքեցին՝ իբր ստուգելու անձնագրերը: Հասկացանք, որ այդ ամենը կազմակերպել են ադրբեջանցիները: Մենք ինքնակամ հանձնվեցինք ու այդպես էլ գերի ընկանք»:*

Այդ գյուղի տղամարդկանց մեծ մասը գերեվարվել է այդ նույն ժամանակ:

Նախկին ռազմագերիների զբաղվածության խնդիրները

Հարցազրույցին մասնակցած տասը նախկին ռազմագերիներից ութն ապահովված են աշխատանքով: Աշխատանքի բնույթը բազմազան է՝ պահակ, ուսուցիչ, բանվոր, վարորդ, պաշտպանության նախարարության աշխատակից:

Գերեվարման ընթացքում առողջության կորստի հետևանքով նախկին ռազմագերիները չեն կարողանում կատարել բարձր վարձատրվող աշխատանքներ, հատկապես, երբ դա կապված է ֆիզիկական ծանրաբեռնվածության հետ:

Ինչպես նշում է նախկին ռազմագերիներից մեկը. *«Ֆիզիկական աշխատանք չեմ կարողանում կատարել ու չեմ կարողանում պահել ընտանիքս, գումարը չի բավականացնում»:*

Նախկին ռազմագերիների առողջական խնդիրները, բնակարանային պայմանները

Ուսումնասիրության մեջ ընդգրկված բոլոր նախկին ռազմագերիներն ունեն առողջական վիճակով պայմանավորված հաշմանդամության կարգ և պետության կողմից ստանում են օրենքով սահմանված կենսաթոշակ:

Նախկին ռազմագերիները նշում են, որ հաշմանդամություն ձեռք են բերել գերությունից հետո:

Գերության ընթացքում ձեռք բերված հիվանդություններն էական ազդեցություն են ունենում նախկին ռազմագերիների առողջական վիճակի և աշխատանքային գործունեության վրա:

Նրանք նշում են, որ իրենց մոտ առաջ է եկել նյարդային հիվանդություններ, լսողական, հոգեբանական խնդիրներ:

Հարցազրույցի մասնակիցներից յոթը նշում են, որ որևէ օգնություն և աջակցություն չեն ստացել պետության կողմից, մնացած երեքը ստացել են անվճար բուժում, որոնցից մեկը նաև առողջարանային բուժում:

Հարցազրույցին մասնակցած բոլոր նախկին ռազմագերիները ապահոված են բնակարաններով, բայց այցելած բնակարանների մեծ մասը նորոգման կարիք ունեն:

Ընդ որում, նախկին ռազմագերիներից մեկին պետությունը հատկացրել է բնակարան որպես ազատամարտիկի:

Նախկին ռազմագերիների ինտեգրման խնդիրները

Հարցազրույցին մասնակցած նախկին ռազմագերիների մեծ մասը՝ ինը, հասարակության վերաբերմունքը գնահատում են որպես հարգալից և ուշադիր:

Հասարակության մեջ ինտեգրման տեսակետից նախկին ռազմագերիները կարևորում են պետության կողմից առողջական վիճակի վերականգնումը և սոցիալական աջակցությունը:

Ինչպես նշում է նախկին ռազմագերիներից մեկը. *«Պետությունը չի ընդունում մեզ որպես նախկին ռազմագերիների, ոչ մի աջակցություն չի ցուցաբերում»:*

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձևակերպվեցին հետևյալ խնդիրները

- անհրաժեշտ է նախկին ռազմագերիներին տրամադրել պատերազմի մասնակցի իրավական կարգավիճակ՝ ընդգրկելով պետական աջակցության ծրագրերում
- մշակել նախկին ռազմագերիների բնակարանային պայմանների բարելավման ծրագիր
- ստեղծել նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների անդամների հոգեբանական աջակցության ծառայություն
- մշակել նախկին ռազմագերիների զբաղվածության ծրագիր

ՀԱՅԱՍՏԱՆ

Անհայտ կորածների ընտանիքների խնդիրները Հայաստանում

Ուսումնասիրությունն իրականացվել է դարաբաղյան պատերազմում տասնութ անհայտ կորած հարազատների շրջանում: Նրանցից տասներեքն ունեն միջնակարգ կրթություն, մեկը՝ թերի բարձրագույն, չորսը՝բարձրագույն կրթություն:

Հարցազրույցներին մասնակցած տասնութ անհայտ կորած հարազատներից հինգը Վանաձորից են, տասը՝Երևանից, երկուսը՝ Արարատի մարզի Խոր Վիրապ գյուղից, մեկը՝Լոռու մարզի Օձուն գյուղից:

Հարցազրույցներին մասնակցած տասնհինգն անհայտ կորած զինվորների ծնողներ են, երկուսը՝կին, մեկը՝աղջիկ:

Մինչ անհայտ կորելն անհայտ կորածներից հինգն ամուսնացած են եղել, որոնցից չորսն ունեն երեխաներ: Ներկայումս այդ երեխաներից մեկն ինքնուրույն է ապրում, երեքն ապրում են մոր հետ:

Անհայտ կորածների չորս երեխաներից երեքը սովորում են բարձրագույն ուսումնական հաստատությունում: Մեկն ուսման դիմաց չի վճարում, մյուսը՝տարեկան վճարում է 100.000 դրամ (250 ԱՄՆ դոլար):

Անհայտ կոչելու հանգամանքները և փնտրման աշխատանքները

Ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված անհայտ կորածներից տասնչորսն անհետացել են 1992-94թթ., չորսը՝ 1995-1998 թթ.:

Անհետանալու մասին առաջին տեղեկությունները հարազատները ստացել են տարբեր աղբյուրներից և տարբեր ժամկետներում: Մասնավորապես, երեք հոգու հայտնել են զինկոմիսարները, երկու հոգու՝ պաշտպանության նախարարությունը, չորս հոգին անհետանալու մասին իմացել են զինակիցներից, մեկ հոգի հայտնում է, որ իմացել է լուրերից, երկու հոգի՝ հրամանատարից, մեկն էլ իրավապահ մարմիններից:

Անհայտ կորածներից մեկի մայրը նշում է. *«Երդման արարողությունից շատ չանցած մեր տուն եկան հրամանատարները, ինձ տարան գեներալի մոտ, որն էլ հայտնեց, որ որդիս կորել է, և որ իրենք զբաղվում են որոնողական աշխատանքներով»:*

Անհետանալու վերաբերյալ հարազատներին տեղեկությունների հաղորդումը կրել է չկարգավորված բնույթ:

Հարազատներից մեկը նշում է. *«Դիմել ենք պաշտպանության նախարարություն, որտեղից էլ հայտնեցին, որ տղաս գտնվում է Ադրբեջանի Գոբուստանի բանտում, բայց դրանից հետո ոչ մի լուր այդպես էլ չստացանք»:*

Որոնման աշխատանքներով հիմնականում զբաղվել են անհայտ կորածների հարազատները՝ տասներեք հոգի, ընդ որում տասը հոգի նշում է, որ զբաղվել է նաև պաշտպանության նախարարությունը: Որոնման աշխատանքներով զբաղվել են նաև հրամանատարները՝ երեք հոգի և ընկերները՝ երեք հոգի:

Ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված տասնութ անհայտ կորածներից տասնվեցը հայտնում են, որ անհետանալու վերաբերյալ ունեն պաշտոնական փաստաթուղթ:

Անհայտ կորածներից տասնմեկն իրենց հարազատների դիմումի հիման վրա դատարանի վճռով ճանաչվել են մահացած: Անհայտ կորածների հարազատները դա բացատրում են պետության կողմից տրվող սոցիալական աջակցությունից օգտվելու հանգամանքով:

Անհայտ կորածների հարազատների սոցիալական ապահովության, առողջապահության և խնդիրների լուծման և զբաղվածության վիճակը

Ուսումնասիրության մեջ ընդգրկված անհայտ կորածների տասնութ հարազատներից միայն ութն է ապահոված աշխատանքով: Նրանք աշխատում են տարբեր բնագավառներում՝ պահակություն, առևտուր, ծառայությունների մատուցում և այլն:

Անհայտ կորածների երեխաներից մեկը ապրուստի միջոց նշում է տատի թոշակը, մյուսը՝ անհայտ կորածի այրուն տրվող պետության կողմից թոշակը՝ զոհվածի կնոջ կարգավիճակին համապատասխան:

Անհայտ կորածների հարազատներից չորսը նշում են, որ ստացել են անվճար բուժօգնություն, իսկ տասներեք հարազատ հայտնում են ֆինանսական աջակցություն ստանալու մասին (գումարը կազմում է 7.000 դրամից մինչև 12.000 դրամ՝ 15-30 ԱՄՆ դոլար):

Անհայտ կորածների հարազատները չունեն առանձին իրավական կարգավիճակ և ընդգրկված չեն պետության կողմից տրամադրվող սոցիալական և առողջապահական ծրագրերում:

Անհայտ կորածների երեխաները որևէ արտոնությունից չեն օգտվում կրթություն ստանալու և աշխատանքի ընդունվելու ժամանակ:

Անհայտ կորածների հարազատների բնակարանային և ինտեգրման խնդիրները

Ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված անհայտ կորածների հարազատներն ունեն իրենց սեփական բնակարանները և հիմնականում գոհ են իրենց կենցաղային պայմաններից:

Միայն մեկն է դժգոհել կենցաղային պայմաններից. *«Պատկերացրեք ապրում ենք յոթ հոգով երկու սենյականոց բնակարանում: Ի՞նչ պայմանների մասին է խոսքը: Աշխատանք էլ չկա, որ գոնե վարձով կարողանանք ապրել»:*

Անհայտ կորածների հարազատների կեսը հասարակության վերաբերմունքը գնահատում է բարյացկամ և հոգատար, մյուս կեսը՝ անտարբեր:

Հարազատներից մեկն ասում է. *«Մեծ մասամբ չեմ էլ ասում, որ տղաս կորել է, սկսում են մարդիկ խղճալ ինձ, չեմ ուզում»:*

Պետության կողմից ցուցաբերվող վերաբերմունքի վերաբերյալ անհայտ կորածների հարազատներն ունեն մեկ պահանջ. իրենց հարազատների որոնման աշխատանքների շարունակում, նրանց ճակատագրի և գտնվելու վայրի մասին ստույգ տեղեկությունների ձեռքբերում:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձևակերպվեցին հետևյալ խնդիրները.

- սահմանել անհայտ կորածի իրավական կարգավիճակ
- մշակել պետական ծրագրեր՝ անհայտ կորածների հարազատների, ընտանիքի անդամների կրթական, սոցիալական և առողջապահական խնդիրների լուծման նպատակով
- անհայտ կորածների գտնվելու և ճակատագրի մասին տեղեկությունների ճշտման, որոնման աշխատանքների արդյունավետության բարձրացում

Փախստականների հիմնախնդիրները Հայաստանում

Ուսումնասիրությունն իրականացվել է քսանվեց փախստականների շրջանում:

Նրանցից տասնյոթը բնակվում են գյուղական բնակավայրերում, մյուսները՝ Երևան (ութ հոգի) և Վանաձոր (մեկ հոգի) քաղաքներում:

Քսանվեց փախստականներից տասնչորսի բնակության նախկին վայրը հանդիսացել է Բաքուն, մյուսներինը՝ Ադրբեջանի տարբեր գյուղական բնակավայրեր: Քսանվեց փախստականներից քսանմեկն ամուսնացած են:

<u>Ուսումնասիրությանը մասնակցած փախստականների քսաներեք երեխաներից յոթը ներկայումս ստանում են բարձրագույն կրթություն:</u>

<u>Փախուստից հետո նոր բնակավայրում տասնչորս հոգու ընտանիքում անդամների թիվն ավելացել է: Ուսումնասիրությանը մասնակցած միայն հինգ փախստական է մասնակցել վերամասնագիտացման դասընթացների:</u>

Փախուստի դիմելու հանգամանքները և փախստականի կարգավիճակի ձեռք բերումը

Ուսումնասիրությանը մասնակցած քսանվեց փախստականներից քսանմեկը գաղթել են 1988-89թթ., հինգը՝ 1990-92 թթ.:

Ինչպես նշում է փախստականներից մեկը. *«1992թ-ի հունիսի 16-ին մտան գյուղ և մեզ դուրս գցեցին մեր տներից»:*

Մինչ փախուստը քսանվեց փախստականներից միայն տասն է կարողացել վաճառել բնակարանը, մնացածը թողել են գույքը, և միայն ամենաանհրաժեշտ իրերով կարողացել են հասնել անվտանգ վայր: Փախուստից անմիջապես հետո տասնվեց փախստականներ տեղափոխվել են բնակության ներկայիս վայրերը: Սկզբնական շրջանում պատսպարվել են հանրակացարաններում (երեք հոգի), հարազատների մոտ (մեկ հոգի), մնացածը սկզբում տեղափոխվել են Ռուսաստանի Դաշնություն:

Ինչպես նշում է փախստականներից մեկը. *«8 տարի ապրել ենք Աշտարակի դպրոցներից մեկում, հետո տեղափոխվեցինք Կարին գյուղ»:*

Սկզբնական շրջանում տեղավորման պայմանները փախստականները գնահատում են խիստ անբավարար. *«Մեզ տեղավորել էին խուլ վայրում, որտեղ նորմալ պայմաններ չկային, չկար ոչինչ»:*

Ուսումնասիրությանը մասնակցած բոլոր փախստականները ձեռք են բերել ՀՀ քաղաքացիություն:

Մինչ քաղաքացիություն ստանալը, բոլորն էլ ունեցել են փախստականի կարգավիճակ, որը ստացել են 1989-1994թթ.:

Փախստականների զբաղվածության վիճակը

Ուսումնասիրության մեջ ընդգրկված փախստականներից միայն տասն են ապահովված աշխատանքով, տասնվեցն աշխատանք չունեն: Նրանք աշխատում են տարբեր բնագավառներում՝ գյուղատնտեսություն, հասարակական աշխատանք, առևտուր, արտադրություն, սպասարկում և այլն:

Աշխատավարձերը կազմում են 35.000-60.000 ՀՀ դրամ է (81-150 ԱՄՆ դոլար):

Ուսումնասիրության մասնակիցները, որոնք ապահոված են աշխատանքով, գտնում են, որ եկամուտները բավարար չեն նվազագույն կենսական խնդիրները լուծելու համար:

Գյուղական համայնքներում բնակվող փախստականներն ավելի գոհ են իրենց ապրելակերպից. *«Ամեն ինչ ունեմ, աշխատում եմ, կարողանում եմ նորմալ ընտանիքս ապահովել, չեմ դժգոհում»*,- նշում է փախստականներից մեկը:

Փախստականների բնակարանային պայմանները

Հարցազրույցներին մասնակցած քսանվեց փախստականներից տասը բնակվում են ժամանակավոր կացարաններում:

Տասնվեց փախստականներ, որոնք ունեն սեփական բնակարաններ և բնակվում են գյուղական համայնքներում, ստեղծել են նորմալ կենցաղային պայմաններ և մեծ դժգոհություններ չունեն:

Ժամանակավոր կացարաններում բնակվողները դժգոհում են. *«Պայմանները վատն են, խոնավ է, իսկ ձմռանը վառարան ենք վառում: Գրեթե ամեն ինչ վաճառել ենք, որ հաց գնենք»:*

Պետությունը ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականներից միայն երկուսին է խոստացել հատկացնել բնակարաններ:

Փախստականների սոցիալական աջակցության և ինտեգրման խնդիրները

Հասարակության վերաբերմունքը փախստականների նկատմամբ տարբեր է. մի մասը գնահատում է հոգատար և ուշադիր, մյուս մասը՝ անտարբեր վերաբերմունք:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված փախստականներից մեկը նշում է. *«Մեզ թուրք են անվանում ու աշխատանքի չեն տեղավորում: Ասում են, թե ձեզ այստեղ ոչ ոք չի կանչել»:*

Հասարակության մեջ լիովին ինտեգրվելու համար փախստականների համար խոչընդոտող գործոն է բնակարան չունենալը (վեց հոգի), կայուն աշխատանք չունենալը (չորս հոգի), մարդկային վատ վերաբերմունքը (երկու հոգի):

Հարցազրույցին մասնակցած փախստականներից մեկը նշում է. *«Ապրում էի Բաքվի կենտրոնում, լավ պայմաններ, լավ աշխատանք ունեի, իսկ հիմա ոչ նորմալ պայմաններում եմ ապրում, ոչ աշխատանք ունեմ»:*

Քսանվեց փախստականներից երեքը պետության կողմից ստացել են ավտոմեքենա, չորսը ստացել են դեղորայք և անվճար բուժում, հինգին էլ ֆինանսական աջակցություն են ցուցաբերել:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձևակերպվեցին հետևյալ խնդիրները.

- մշակել փախստականներին բնակարաններով ապահովելու ծրագիր
- մշակել փախստականների զբաղվածության ծրագիր
- հասարակության իրազեկման բարձրացում փախստականների խնդիրների վերաբերյալ

Նախկին ռազմագերիների խնդիրները Հայաստանում

Նախկին ռազմագերիների խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է վեց նախկին ռազմագերիների հետ (որից մեկը կին) հարցազրույցների միջոցով:

Նրանցից հինգը բնակվում են Երևանում, մեկը՝ Վանաձորում:

Հարցումներին մասնակցած վեց նախկին ռազմագերիների տարիքը 30-ից մինչև 60 տարեկան է: Նրանցից երեքն ունեն միջնակարգ կրթություն, մեկը՝ թերի բարձրագույն կրթություն, երկուսը՝ բարձրագույն կրթություն: Բոլորն ամուսնացած են և ունեն երեխաներ:

Գերի ընկնելու հանգամանքները

Հարցումներին մասնակցած վեց նախկին ռազմագերիների գերեվարումը տեղի է ունեցել 1992թ.-ից մինչև 1994թ. ընկած ժամանակահատվածում: Գերեվարումը տեղի է ունեցել պատերազմական գործողությունների ընթացքում կամ շրջափակման հետևանքով: Նախկին ռազմագերիներից մեկը գերի է վերցվել Վրաստանի Թբիլիսի քաղաքում:

Հարցազրույցին մասնակցած նախկին ռազմագերիներից մեկը նշում է. *«1993թ-ին գնացի Բաքու երեխաներիս հետևից, գերի ընկա, 6 ամիս պահեցին գերության մեջ»*:

Նախկին ռազմագերիների առողջական և զբաղվածության խնդիրները

Ուսումնասիրության մեջ ընդգրկված վեց նախկին ռազմագերիներից հինգն ունեն հաշմանդամության կարգ, որը ձեռք են բերել գերությունից հետո:

Նրանք նշում են, որ գերությունից հետո նրանց մոտ առաջ են եկել նյարդային խանգարումներ, թոքերի, երիկամների հետ կապված խնդիրներ:

Նախկին ռազմագերիներից մեկը նշում է. *«Գերությունից հետո դարձա երկրորդ կարգի հաշմանդամ, ոտքերի պոլիարթրիտ ունեմ, կանացի հիվանդություն ձեռքբերեցի»:*

Հարցազրույցին մասնակցած նախկին ռազմագերիներից ոչ մեկն ապահովված չէ աշխատանքով:

Նրանցից մեկը նշում է. *«Չեմ կարողանում նորմալ ապրել, աշխատանք գտնել»:*

Զբաղվածության խնդրի լուծման խոչընդոտող հանգամանքներից հիմնականն առողջական խնդիրների առկայությունն է:

Նախկին ռազմագերիների բնակարանային պայմանները

Հարցազրույցին մասնակցած վեց նախկին ռազմագերիներից չորսը բնակվում են իրենց սեփական բնակարաններում, մեկը՝ հանրակացարանում, մեկը վարձու բնակարաններում: Ընդ որում, բնակարաններն ունեն վերանորոգման կարիք:

Նախկին ռազմագերիները հայտնում են, որ պետությունը ոչ մի աջակցություն և օգնություն չի տրամադրում թե՛ բնակարանների խնդրի լուծման, թե՛ բնակարանների վերանորոգման հարցերում:

Նախկին ռազմագերիների սոցիալական աջակցության և ինտեգրման խնդիրները

Հասարակության վերաբերմունքը հարցազրույցին մասնակցած վեց նախկին ռազմագերիների գնահատումները տարբեր են. չորս հոգի հասարակության վերաբերմունքը գնահատում է հոգատար, երկու հոգին՝ անտարբեր:

Նախկին ռազմագերիներից միայն մեկն է նշում, որ պետության կողմից ստացել է ֆինանսական աջակցություն, մյուսները ոչ մի օգնություն չեն ստացել:

Նախկին ռազմագերիներից մեկը նշում է. *«Ես երբեմն թաքցնում եմ, որ եղել եմ գերի, չեմ ուզում, որ ինձ խղճան»:*

Հասարակության լիիրավ ինտեգրման համար նախկին ռազմագերիները կարևորում են աշխատանքով ապահովվածությունը (երկու հոգի), բնակարանով ապահովումը (մեկ հոգի), պետության կողմից աջակցությունը (երեք հոգի):

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձևակերպվեցին հետևյալ խնդիրները.

- անհրաժեշտ է նախկին ռազմագերիներին տրամադրել պատերազմի մասնակցի իրավական կարգավիճակ՝ ընդգրկելով պետական աջակցության ծրագրերում
- մշակել նախկին ռազմագերիների բնակարանային պայմանների բարելավման ծրագիր
- մշակել նախկին ռազմագերիների զբաղվածության ծրագիր

ԳԼՈՒԽ 3

Պատերազմական գործողություններից տուժածների խնդիրների լուծման ուղղությամբ պետական մարմինների հետ համագործակցությունը

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

Անհայտ կորածների և նրանց հարազատների, փախստականների և նախկին ռազմագերիների խնդիրների ուսումնասիրության արդյունքներն ուղարկվեցին Լեռնային Ղարաբաղի վարչապետ Արայիկ Հարությունյանին, Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի նախագահ Ա. Ղուլյանին, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարար Մ. Հակոբյանին, Լեռնային Ղարաբաղի սոցիալական աջակցության նախարար Նարինե Ազատյանին, Լեռնային Ղարաբաղի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Մարատ Մուսայելյանին:

Ստացվեցին պատասխաններ Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովից, Լեռնային Ղարաբաղի կառավարությունից, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարությունից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

N 03-166 «23» հոկտեմբերի 2009թ.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության նախագահ պարոն Ա. Սաքունցին

Ի պատասխան Ձեր թիվ ԵՊ 181, առ 10.07.09.թ. գրության հայտնում ենք, որ Լեռնային Դարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից փախստականների և անհայտ կորածների ընտանիքների վերաբերյալ ընդունվել են «Փախստականների մասին» ու «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքները: Համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի, օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են գոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաև ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաեւ Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների վրա:

Ինչ վերաբերում է նախկին ռազմագերիներին, ապա նրանք հատուկ իրավական կարգավիճակ չունեն, սակայն «Բռնադատվածների մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն բռնադատվածների հարցերով զբաղվում է համապատասխան հանձնաժողովը, որը ստեղծվում է Լեռնային Դարաբաղի Հանրապետության նախագահի կողմից:

Քանի որ նման կարգավիճակ ունեցող անձանց համար համապատասխան սոցիալական ծրագրերը ԼՂՀ-ում իրականացվում են գործադիր իշխանության կողմից, ուստի Ձեր կողմից բարձրացված մյուս հարցերով կարող եք դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը:

Ա. ՂՈՒԼՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

N 03-895 «03» դեկտեմբերի 2009թ.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության նախագահ պարոն Ա. Սաքունցին

Ի պատասխան Ձեր թիվ ԵՊ-267 առ 16.11.2009թ. գրության, հայտնում ենք. որ նախկին ռազմագերիների և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների վերաբերյալ օրենքների նախագծեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում երբևէ շրջանառության մեջ չեն դրվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախկին ռազմագերիներն անմիջականորեն հավասարեցված չեն բռնադատվածների կարգավիճակին: Նման կարգավիճակ ստանալու նպատակով նրանք կարող են դիմել բռնադատվածների հարցերով զբաղվող հանձնաժողովին, որն էլ իրավասու է որոշել բռնադատվածի կարգավիճակ տալու կամ չտալու հարցը:

Ա. ՂՈՒԼՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

N 1-2/328 «26» սեպտեմբերի 2009թ.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության նախագահ պարոն Ա. Սաքունցին

Հարգելի պրն Սաքունց

Ի պատասխան Ձեր 2009 թվականի հուլիսի 10-ի թիվ ԵՊ-183 նամակի, Ձեզ ենք ուղարկում փախստականների, անհայտ կորածների հարազատների և նախկին ռազմագերիների շրջանակում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները (կցվում է):

Հարգանքով՝ **Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ Կառավարության իրականացրած, իրագործվող և իրագործելիք ծրագրերի մասին

1. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Փախստականներին բնակարանով ապահովելը ԼՂՀ կառավարությունը ստանձնել էր դեռ 1990-ականներից և անգամ պատերազմի ժամանակ այդ խնդիրը դուրս չի մնացել Կառավարության ուշադրության կենտրոնից: ԼՂՀ Կառավարությունը ունի մշակված և մշակման փուլում գտնվող ծրագրեր, որոնց միջոցով իրականացնում է փախստականներին բնակարաններով ապահովումը: Ընդ որում, 2009թ. հունվարից առ այսօր ԼՂՀ Կառավարությունը լուծել է ավելի քան երկու տասնյակ փախստական ընտանիքների բնակարանային հարցերը, և այդ գործընթացը, որպես պետության առաջնահերթ խնդիր, շարունակվում է:

Փախստականների ինտեգրումը բավականին արագ է ընթացել և այսօրվա դրությամբ, կարելի է ասել, խնդիր որպես այդպիսին գոյություն չունի: Փախստականները, ԼՂՀ քաղաքացիների հետ հավասարապես, օգտվում են սոցիալական և այլ ոլորտներում գործող բոլոր պետական և բարեգործական ծրագրերից՝ կարող ձեռք բերել ԼՂՀ քաղաքացիություն, զբաղվել ձեռնարկատիրությամբ, ծառայել պաշտպանության բանակում, ստանալ երկարաժամկետ վարկեր և այլն, և որ ամենից կարևորն է, ընտրողի և ընտրվողի Սահմանադրական իրավունքով մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, իսկ ԼՂՀ-ում հաշվառում ունենալու դեպքում՝ նաև այլ ընտրություններին և քվեարկությունների:

Ինտեգրման սահուն ընթացքին որոշ դեպքերում խոչընդոտ է հանդիսանում լեզվական խնդիրը, սակայն պետությունը դա չի անտեսում: Լեզվի պետական տեսչության կողմից կազմակերպվում են ամենամյա անվճար դասընթացներ՝ 3 ամիս ժամկետով:

Կրթության համակարգում փախստականները ունեն ԼՂՀ քաղաքացիների հետ հավասար իրավունքներ, բացի դրանից՝ ռուսալեզու ընտանիքների երեխաների համար գործում են ռուսական թեքումով պետական (անվճար) միջնակարգ դպրոցներ:

Ինչ վերաբերում է «հանդուրժողականության ձևավորմանը», ապա այդպիսի խնդիր ընդհանրապես չկա, քանի որ հասարակությունը բարիդրացիական տրամադրվածություն ունի ցանկացած ազգի ներկայացուցիչների, առավել ևս՝ ոչ իրենց մեղքով փախստական դարձած անձանց հանդեպ:

Փախստականների առջև ծառացած խնդիրների և դրանց լուծման մասին հանրության իրազեկման ուղղությամբ շահագրգիռ պետական մարմինները համատեղ աշխատանքներ են իրականացնում Հանրային հեռուստաընկերության և զանգվածային լրատվության այլ միջոցների հետ:

2. ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհայտ կորածների ընտանիքների անդամների սոցիալական, այդ թվում կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է զոհված զինծառայողների ընտանիքների անդամների համար սահմանված ընթացակարգերով: Բացի դրանից, նրանց հարազատներին ցուցաբերվում է հոգեբանական աջակցություն անվճար հիմունքներով:

Բնակարանային խնդիրը, չնայած իր բարդությանը, եղել և մնում է իշխանությունների ուշադրության կենտրոնում: Կառավարության որոշումներով նախորոշված հերթականությամբ վերանորոգվում, իսկ բնակարաններ չունեցողներին էլ նոր բնակարաններ են հատկացվում:

1999թ-ից գործում է գերի ընկած, պատանդ վերցրված և անհայտ կորած ԼՂՀ քաղաքացիների հարցերով հանձնաժողով, որն ազատամարտիկների «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» հասարակական կազմակերպության հետ աշխատանքներ են իրականացնում Արցախյան պատերազմի ժամանակ անհայտ կորած ազատամարտիկների, ռազմագերիների ու պատանդ վերցրված քաղաքացիական անձանց որոնման և ազատագրության ուղղությամբ:

3. ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատերազմական գործողությունների ժամանակ գերված և հետագայում ազատված անձանց տրվում է բռնադատվածի կարգավիճակ, և այս գործընթացը շարունակվում է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գերիների մեծ մասը տուն են վերադառնում բարոյահոգեբանորեն ճնշված վիճակում, պետականորեն մշակված ծրագրերով նրանց համար հանդիպումներ են կազմակերպվում հեգեբանների մոտ՝ վերականգնման նպատակով:

Կոմունալ ծառայություններից և տրանսպորտից օգտվելու համար պետական բյուջեից բռնադատված անձանց տրվում է ամենամյա դրամական օգնություն, որի չափը 2009թ. հունվարի 1-ից կազմում է 7.200 դրամ:

Օրենսդրորեն սահմանված է, որ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում բռնադատվածի ազատազրկման, աքսորի կամ արտաքսման վայրում պատիժը կրելու, ինչպես նաև նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու ժամանակահատվածներն ապահովագրական ստաժի մեջ հաշվառվում են եռակի չափով՝ սկսած 14 տարեկանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

N 977 «16» 07 2009թ.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության նախագահ պարոն Ա. Սաքունցին

Ի պատասխան ԼՂՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ձեր 10.07.2009թ. թիվ ԵՊ-180 գրության՝ հայտնում եմ որ ՊԲ հարցերով չի զբաղվում և անհայտ կորածների ընտանիքներին օգնություն ցուցաբերելու համար ՊԲ-ում գոյություն ունեն սոցիալական ծրագրեր, որոնց շրջանակներում կազմակերպվում է օգնության ցուցաբերման աշխատանքները:

Հարգանքներով՝ ՊԲ հրամանատարի օգնական- վարչական խմբի ղեկավար

գնդապետ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Երիտասարդ խաղաղասերների հանդիպումը Լեռնային Ղարաբաղի պետական և ոչ պետական մարմինների հետ

Երիտասարդ խաղասերների կողմից անհայտ կորածների և նրանց հարազատների, փախստականների, նախկին ռազմագերիների խնդիրների ուսումնասիրության արդյունքների և դրանց վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների արձագանքների և տեղեկությունների շուրջ լրացուցիչ պարզաբանումների նպատակով 2009թ. դեկտեմբերի 14-17-ը կազմակերպվեց հանդիպումներ ԼՂ ԱԺ նախագահ Ա. Ղուլյանի, ԱԺ խմբակցությունների պատգամավորների, Լեռնային Ղարաբաղի ԱԺ անկախ պատգամավոր Գ. Բաղդասարյանի և «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Վերա Գրիգորյանի հետ:

Հանդիպումներին մասնակցում էին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակազմը և Լեռնային Ղարաբաղի երիտասարդ խաղաղասերները:

ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը ցավով նշեց, որ քաղաքացիական հասարակության կառույցների՝ հասարակական կազմակերպությունների ու պետական կառույցների միջև համագործակցությունը խիստ անբավարար է: Եթե նման համագործակցությունը լիներ, ապա հասարակության տարբեր շերտերի, այդ թվում՝ պատերազմից տուժածների հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքները կլինեին ավելի արդյունավետ:

ԱԺ նախագահը նշեց, որ այդ մարդկանց խնդիրների լուծմանը կարողանում են անդրադառնալ այնքանով, որքանով հնարավորություն են տալիս պետական միջոցները: ԼՂՀ-ում պատերազմից տուժածների հիմնախնդիրների լուծման համար ռեսուրսների միակ աղբյուրը պետական է, միջազգային կառույցների դերը այդ խնդիրների լուծման մեջ գրեթե զրոյական է՝ Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի անհստակության պատճառով:

Միջազգային պարտավորությունները շրջանցում են Լեռնային Ղարաբաղին: ԼՂ խնդրի հետ կապված մեզնից պահանջում են այս անել, այն անել, և դրա հետ մեկտեղ ոչ մեկը չի ցանկանում ինչ-որ պարտավորություն ստանձնել:

Օրինակ, երբ որևէ ադրբեջանցի հայտնվում է մեր տարածքում, մենք անմիջապես դրա մասին տեղեկացնում ենք Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի ներկայացուցիչներին, նույնը չի անում Ադրբեջանը: Այսինքն, անհավասարակշռություն կա մեր երկրների միջև: Ադրբեջանի կողմից անմիջական տեղեկատվության փոխանակման պակաս կա: Այդ ամենը կատարվում է Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի ներկայացուցիչների միջոցով:

ԼՂՀ ԱԺ նախագահի տվյալներով կոնֆլիկտի սկզբնական փուլում ԼՂՀ-ում փախստականների թիվը մոտավոր 7-8 հազար էր: ՀՀ տեղափոխված փախստականները միանգամից հայտնվել են միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում: Նմանատիպ օգնություն չի ցուցաբերվել ԼՂՀ փախստականներին:

1988-89թթ. ԼՂՀ տարածքում հանգրվանած փախստականների մեծ մասին ապահովել են բնակարաններով: Մյուսներին տեղավորել են ժամանակավոր կացարաններում: Երբ պետությունը հնարավորություն է ունենում, ապա անպայման տրամադրում է բնակարաններ:

ԼՂՀ բնակարաններով ապահովում է նաև զոհված ազատամարտիկների ընտանիքներին, բռնադատվածներին, առաջին կարգի հաշմանդամներին: *«Մեր պետության համար դա մի լրա-*

ցուցիչ բեռ է, և ոչ մի միջազգային կառույց չի աջակցում: Եվ դա միշտ վերագրում են նրան, որ Ադրբեջանը դեմ է»,- նշեց ԼՂՀ ԱԺ նախագահ Ա Ղուլյանը:

«Երբ բաշխում ենք բյուջեն, մտածում ենք՝ ինչ անել. դպրոց կառուցենք, թե ինֆորմացիոն ինչ-որ կառույց: ԼՂ հասարակությունը ինֆորմացիայի պակաս ունի, չկա կամքի դրսևորում:

Նույնը չենք կարող ասել Ադրբեջանի փախստականների մասին. նրանք Ադրբեջանում մշտապես օգնություն են ստանում»,- շարունակեց Ա. Ղուլյանը:

ԼՂՀ ԱԺ նախագահը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց նաև հետևյալ խնդրի վրա. *«Մեկ այլ կողմ կա ևս. դա այն է, որ այդ երեք կատեգորիաները՝ անհայտ կորած, փախստական, նախկին ռազմագերի, խառնված են: Օրինակ, այդ նույն ընտանիքում կարող է լինել և՛ անհայտ կորած, և՛ փախստական»:*

Անդրադառնալով անհայտ կորածների խնդիրներին՝ ԱԺ նախագահը հայտնեց, որ մի պայման պետք է աշխատի. Ադրբեջանը լրիվ բացի իր բոլոր օբյեկտները: *«Ստացվում է, որ մենք ամեն ինչ անում ենք (նրանց առաջ բացում ենք բանտերը, նրանք կարող են գալ, տեսնել), բայց նույնը չենք ստանում: Մենք ոչինչ ոչնչի դիմաց չենք դնում, այնպես է ստացվում, որ միակողմանի պարտավորություն ենք ստանձնել»:*

«Այն խնդիրները, որոնց մեջ կա ԼՂ թեման, պիտի մասնակցի նաև ԼՂ»,- հայտարարեց Ա. Ղուլյանը՝ շարունակելով,- *«Այն երկիրը, որն իրեն անկախ է հռչակել, պիտի լինի նույն միջազգային չափանիշների վրա»:*

Անդրադառնալով անհայտ կորածների խնդրին՝ ԼՂՀ ԱԺ նախագահն ասաց, որ *«Անհայտ կորածի մասին օրենք ընդունելով՝ մենք այդ մարդկանց հարցը չենք լուծում: Մինչև չունենանք ինֆորմացիայի բազա Ադրբեջանից, չենք կարող լուծել նրանց խնդիրները: Իսկ ադրբեջանական կողմը շատ փակ է, և հնարավոր չէ ոչ մի հավաստի տեղեկություն ստանալ»:*

Երիտասարդ խաղաղասերների հանդիպումը «Ազատ հայրենիք» կուսակցության անդամ Գագիկ Պետրոսյանի հետ

Առաջարկություն ԼՂՀ ԱԺ նախագահի կողմից - «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ մշակված ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկել ԼՂՀ, որտեղ դրա հիման վրա կանցկանցվեն լսումներ տարբեր կառույցների (պետական և ոչ պետական) հետ օրենքի ընդունման նպատակով:

«Ազատ հայրենիք» կուսակցություն անդամ Գագիկ Պետրոսյանը հանդիպման սկզբում նշեց, որ ԼՂՀ-ում բացակայում են այն կառույցները, որոնք կարող էին զբաղվել պատերազմից տուժածների խնդիրներով: Կարիք կա, որպեսզի ՀԿ-ները և պետական կառույցները զբաղվեն այդ խնդիրներով: Ֆինանսական աջակցություն կա, բայց չկան համապատասխան մասնագետներ, մարդիկ, որոնք կարող են զբաղվել այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Մեր այն հարցին, թե ինչ հիմունքներով են ընտրվում այն փախստականները, որոնց պետությունը բնակարաններով ապահովում է, Գ. Պետրոսյանը նշեց, որ այդ հերթացուցակը որոշում է ԼՂՀ Սոցիալական ապահովության նախարարությունը:

Գ. Պետրոսյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց ԼՂՀ-ում կանանց աշխատատեղերի սակավության խնդրին: Սա կարևորագույն խնդիր է, որը, ցավոք, դուրս է մնում շատ կազմակերպությունների ուշադրությունից հակամարտության գոտիներում:

Նա ավելացրեց նաև, որ եթե լինեն խնդրի լուծմանն ուղղված առաջարկություններ, ապա կարելի է զբաղվել դրանով, և հույս հայտնեց, որ այս մոնիթորինգի արդյունքները կարող են հանդիսանալ հիմք դրա համար:

Գ. Պետրոսյանը նշեց, որ կան օրենսդրական բացեր, որոնք հնարավորություն չեն տալիս լուծել շատ խնդիրներ:

Առաջարկություն «Ազատ հայրենիք» կուսակցության անդամ Գագիկ Պետրոսյանի կողմից - հիմնականում իրենց հուզող խնդիրներով հավաքներ, ժողովներ լինեն, դիմեն քաղաքական գործիչներին:

Մարդիկ իրենց վրա վերցնում են պարտավորություններ՝ ստանձնելով այս կամ այն պաշտոնը, բայց շատ դեպքերում չեն համապատասխանում այդ պաշտոնին:

Անհրաժեշտ է, որպեսզի ՀԿ-ները ուսումնասիրեն այդ մարդկանց գործունեությունը, և պարզ կդառնա, որ այդ մարդիկ իրենց պաշտոնը զբաղեցրել են ոչ օրինական միջոցներով:

«Բյուրոկրատական քաշքշուկը շատ է»,- հայտնեց Աժ պատգամավորը:

Գ. Պետրոսյանը հայտնեց նաև, որ ներկայումս փորձագիտական հետազոտման է ուղարկված ԼՂՀ «Երկքաղաքացիության մասին» օրենքը:

Հանդիպման ժամանակ երիտասարդ խաղաղասեր Ալեքսանդր Բադալովը անդրադարձավ հայերի և ադրբեջանցիների միջև տեղեկատվական պատերազմին, որում, ըստ նրա, Ադրբեջանի պաշտոնական տեսակետները գերակշռում են:

Մասնավորապես, երբ փորձում են տեղեկատվություն ստանալ ԼՂՀ մասին ինտերնետային **Google** կայքից, ապա միանգամից բացում է **www.google.az**, և ստացվում է, որ *«Մենք գտնվում ենք Ադրբեջանում, և շատ տուրիստներ, որոնք փորձում են իմանալ Ղարաբաղի մասին (տեսարժան վայրեր, փաստեր և այլն), կարծում են, որ ԼՂՀ գտնվում է Ադրբեջանի սահմանում, ստացվում է ապատեղեկատվություն, և մենք ոչինչ չենք կարողանում անել ադ սխալը շտկելու համար»*,- նշեց երիտասարդ խաղաղասերը:

Գագիկ Պետրոսյանի կարծիքով պատճառն այն է, որ Ադրբեջանի իշխանությունները շատ մեծ գումար են ներդնում հակահայկական պրոպագանդայի համար:

Ալեքսանդր Բադալովը անդրադարձավ նաև կրթական խնդիրներին: Նա շատ անգամներ դիմել է տարբեր ֆոնդերի, որոնք ֆինանսավորում են արտասահմանում ուսում ստանալու համար, բայց իմանալով, որ ինքը ԼՂՀ-ից է, մերժում են: Այսինքն, Լեռնային Ղարաբաղում երիտասարդները կրթություն ստանալու հնարավորություն չունեն:

Ի պատասխան՝ Գ. Պետրոսյանը հայտնեց. *«Արդեն կա նման գաղափար, մշակված ծրագիր, գումար էլ ունենք, մնում է միայն իրականացնենք այդ ծրագիրը»:*

Գեղամ Բազդասարյան՝ անկախ պատգամավոր, Ստեփանակերտի մամուլի ակումբի նախագահ - *«Նշված կատեգորիաների (անհայտ կորած, նախկին ռազմագերի, փախստական) հետ կապված առաջնային խնդիրը «Քաղաքացիության մասին» օրենքի բացակայությունն է»:*

Գ. Բաղդասարյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց հետևյալ խնդրին. *«Դիմում ենք ուրիշներին, որ ճանաչեն մեր անկախությունը, բայց եթե չկա այդ օրենքը, ինչպես կարող ենք լինել անկախ: Օրինակ, փախստականների իրավունքները կանոնակարգված չեն. նրանք չեն կարողանում մասնակցել համապետական ընտրություններին»:*

Այնուհետև եզրափակեց. *«Եթե քաղաքացիության հարցը չի լուծվում, ապա մյուս խնդիրների մասին խոսելն ավելորդ է: Աբսուրդ է, որ երկիրը չունի քաղաքացիության մասին օրենք»:*
Հանդիպման ընթացքում ձևակերպվեցին հրատապ լուծվելիք հետևյալ խնդիրները.

- *ԼՂՀ «Քաղաքացիության մասին» օրենքի ընդունում*
- *Փախստականների լեզվական խնդիրների լուծում*

Երկրորդ խնդրի վերաբերյալ զեկույցի մեջ նշված էր, որ որոշ փախստականներ դժվարություն են ունենում դիմումներ ներկայացնել պետական մարմիններին ռուսական կրթություն ունենալու պատճառով: Նշվեց նաև, որ, ըստ ԼՂՀ Կառավարության ներկայացված պատասխանի, հայերեն լեզվով դասընթացներ են կազմակերպվում ռուսալեզու կրթությամբ մարդկանց համար:

Ըստ Գ. Բաղդասարյանի՝ անհրաժեշտ է, որպեսզի ավագ սերնդի ներկայացուցիչներին իրավունք տրվեր դիմումները ներկայացնել ռուսերեն լեզվով՝ չնայած ԼՂՀ պետական լեզուն հայերենն է, իսկ նրանց երեխաներին ընդունեին ռուսական թեքումով դասարաններ, որոնք ուսմանը զուգընթաց բարձր դասարաններում աստիճանաբար կանցնեին հայերեն լեզվով ուսուցմանը: Ներկայումս, փախստականներին բնակարաններ հատկացվում են այնպիսի տարածքներում, որոնք գտնվում են քաղաքի կենտրոնից բավական հեռու, և շատ դեպքերում մարդիկ նախընտրում են մնալ ժամանակավոր կացարաններում, քան տեղափոխվել նորմալ պայմաններով բնակարաններ:

Մյուս կողմից, ըստ Գ. Բաղդասարյանի, չպետք է լինի փախստականների թաղամաս, զոհված ազատամարտիկների շենք, դա ուղղակի ամոթ է: Սա ինտեգրում չէ, այլ ընդգծում է նրանց առանձնահատկությունը, խոցելիությունը:

Այսինքն, մոտեցման հիմքում պետք է լինի ոչ միայն բնակարանի տրամադրումը, այլ համապատասխան միջավայրի ստեղծումը:

Նախկին ռազմագերիների վերաբերյալ Գ. Բազդասարյանը նշում է. *«Պետք է մինչև պատերազմական գործողությունները գերի ընկածներին տրվի բռնադատվածի, իսկ պատերազմի մասնակիցներին՝ ազատամարտիկի կարգավիճակ»:*

Աժ անկախ պատգամավորը քննարկվող խնդիրների լուծման մեջ կարևորում է հասարակական կազմակերպությունների մասնակցությունը: Նա գտնում է, որ պետք է ստեղծել համապատասխան կազմակերպություններ, որոնք կզբաղվեն պատերազմից տուժածների հարցերով՝ տարբեր պետական կառույցների հետ համագործակցության մեջ ներգրավելով պատերազմից տուժածներին: Այսինքն, կարևոր է ինքնակարգավորումը՝ իրենց ինտեգրումը իրենց խնդիրների լուծման մեջ:

«Հայ հեղափոխական դաշնակցություն-Շարժում 88» դաշինքի անդամ, Աժ պատգամավոր Արմեն Սարգսյանը, հանդիպման ընթացքում անդրադառնալով փախստականների խնդիրներին, նշեց, որ նրանք ԼՂՀ-ում որևէ խնդիր չունեն: *«Նրանք հիմնականում եկել են իրենց տները, այսինքն, պետությունը հիմնականում վերաբնակեցման տարբերակն էր առաջարկում:*

Երիտասարդ խաղաղասերների հանդիպումը «Հայ հեղափոխական դաշնակցություն-Շարժում 88» դաշինքի անդամ Արմեն Սարգսյանի հետ

Պետությունը նրանց տներ է առաջարկում կամ օգնում է վերանորոգման հարցերում:

Ինչ վերաբերում է փախստականների լեզվական խնդիրներին, ապա Ստեփանակերտում բացվեցին ռուսական թեքումով դասարաններ, որտեղ կարող էին սովորել 3 տարի, որից հետո երեխաները կարող էին շատ հեշտությամբ տեղափոխվել սովորական հայալեզու կրթությամբ դասարաններ»:

Ա. Սարգսյանի կարծիքով, պատերազմի ժամանակ ճիշտ է, եղել են լեզվական խնդիրներ, բայց պատերազմից հետո շատ կարճ ժամանակահատվածում այդ խնդիրները վերացել են:

«Փախստականներից շատերը չեն ցանկանում ընդունել քաղաքացիություն, քանի որ փախստականի կարգավիճակով նրանք ունեն որոշակի արտոնություններ»,- նշեց Ա. Սարգսյանը:

Ինչ վերաբերում է փախստականներին հատկացված բնակարանների սեփականաշնորհման խնդրին, ապա այսպիսի խնդիր չկա, քանի որ նրանք հիմնականում նախկինում ապրել են ԼՂ-ում:

Ա. Սարգսյանը հայտնեց, որ նախկին ռազմագերիների թիվը ԼՂՀ-ում շատ չէ:
Նրա կարծիքով սխալ է, երբ նույն կարգավիճակն են տալիս պատերազմի մասնակից զինվորին, որը կռվի դաշտում է գերի ընկել, և ուղղակի փախուստի ժամանակ գերի ընկածին:

Նա հայտնեց, որ ԼՂՀ բյուջեի մեծ մասը ծախսվում է նպաստների և թոշակների հատկացման համար: Եվ որպեսզի բացառվեն տարբեր տիպի կոռուպցիայի դրսևորումները, ԼՂՀ նախագահի պահանջով Հայաստանից հրավիրվել են տարբեր բժիշկներ, որոնք ստուգումներ են իրականացրել հաշմանդամի կարգավիճակ ստացածների փաստաթղթերում՝ պարզելու, թե արդյոք այդ մարդիկ համապատասխանում են պետության կողմից տրվող օգնության չափանիշներին:

Նման ստուգումների արդյունքում բազմաթիվ խախտումներ են արձանագրվել, որոնք հնարավորություն կտան պետության աջակցությունը ավելի արդյունավետ դարձնել և հասցեագրեն նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Այսպիսով, անհրաժեշտ է ունենալ տարբեր իրավիճակներում խոցելի դարձած մարդկանց համար առանձին իրավական կարգավիճակ՝ նկատի ունենալով պատերազմից տուժածների հիմնախնդիրների ամբողջական ուսումնասիրություն հենց կառավարության կողմից՝ հետագայում տարաբաժանելով առանձին կարգավիճակների, ու օրենսդրությամբ ամրագրելով նրանց տրամադրվող աջակցությունը:

Հանդիպելով «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» հասարակական կազմակերպության նախագահ և ղարաբաղյան պատերազմի ժամանակ անհայտ կորած զինվորի մայր Վերա Գրիգորյանի հետ՝ երիտասարդ խաղաղասերները որոշ տվյալներ ստացան անհայտ կորածների վերաբերյալ:

Վերա Գրիգորյանը, անցած տարիներին հավաքագրելով անհայտ կորածների տվյալներն ու համախմբելով նրանց հարազատներին, Ստեփանակերտում ստեղծել է թանգարան: Վերա Գրիգորյանը, բացի թանգարանի ստեղծումից, նաև փորձում է լուծել անհայտ կորածների հարազատների սոցիալական խնդիրները:

Ըստ Վերա Գրիգորյանի տվյալների՝ Ղարաբաղյան պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղի և նրան հարակից բնակավայրերում (դրանք գտնվում են կամ Ադրբեջանական Հանրապետության տարածքում, կամ պատերազմից հետո անցել են ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո) անհայտ կորած մարդկանց թիվը հասնում է 780-ի, ընդ որում, նրանցից 400-ը խաղաղ բնակիչներ են:

«Լեռնային Ղարաբաղում տարեկան 3 անգամ 16.000 դրամական օգնություն են հատկացնում անհայտ կորածների ընտանիքներին: Միևնույն ժամանակ Կառավարության որոշմամբ անհատական խնդիրներ են լուծվել՝ անվճար բուժօգնություն, դրա համար էլ ուրախանում են ու լռում՝ չլուծված խնդիրների առջև աչք փակում», - նշեց Վ. Գրիգորյանը:

«Անհայտ կորած ազատամարտիկների միություն» ՀԿ գրասենյակում մի խումբ անհայտ կորածների մայրերին ցուցադրվեց ծրագրի շրջանակներում պատրաստված «Պատերազմից տուժածները» ֆիլմը:

Հանդիպում «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» հասարակական կազմակերպության նախագահի հետ

ՀԱՅԱՍՏԱՆ

Անհայտ կորածների և նրանց հարազատների, փախստականների և նախկին ռազմագերիների խնդիրների ուսումնասիրության արդյունքներն ուղարկվեցին ՀՀ կառավարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ, ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն, ՀՀ երկրապահների միության վարչություն, ՀՀ ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով:

Ստացվեցին պատասխաններ ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ արտաքին գործերի նախարարությունից, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, ՀՀ տարածքային կառավարման միգրացիոն գործակալությունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 0044, Բագրևանդի փ. 5
Հեռ. (+ 37410)29-44-01
Ֆաքս. (+ 37410)29-43-12
«28» 07 2009թ.
881

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
հասարակական կազմակերպության նախագահ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ
(հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 59)

Հարգելի պարոն Սաքունց

ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր 08.07.2009թ. ԵՊ-167 դիմումն ուսումնասիրվել է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությունում, որի առնչությամբ հայտնում եմ հետևյալը. «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի համաձայն՝ այդ օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաև ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած զինծառայողների ընտանիքների վրա:

Ինչ վերաբերում է նախկին ռազմագերիներին, հայտնում եմ, որ ԲՍՓ գործակալության կողմից զինվորական հաշմանդամ ճանաչվելու դեպքում, նրանք իրավունք են ստանում օգտվելու հաշմանդամ զինծառայողների համար «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնություններից և երաշխիքներից:

Միաժամանակ հայտնում եմ, որ ռազմագերիների և անհայտ կորածների ընտանիքների անդամները կենսաթոշակների նշանակման ու սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից օգտվելու համար ներկայացնում են որոշակի փաստաթղթեր, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի N 778 որոշմամբ:

Հարգանքով՝
ՀՀ ՊՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ս. ՍԵԴՐԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

16/09907
21.07.2009թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր ս.թ. հուլիսի 8-ի թիվ ԵՊ-172 գրության հայտնում ենք, որ ՀՀ-ն Ձեր կողմից նախանշված ոլորտներում միացել է հետևյալ միջազգային պայմանագրերին.

1. «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասինե ժնևի 1949թ. օգոստոսի 12-ի կոնվենցիա
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1993թ. դեկտեմբերի 7-ից; -
2. «Փախստականների կարգավիճակի մասին» ժնևի 1951թ. հուլիսի 28-ի կոնվենցիա
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1993թ. հոկտեմբերի 4-ից;
3. «Փախստականների կարգավիճակի մասին» ժնևի 1967թ. հոկտեմբերի 4-ի արձանագրություն
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1994թ. օգոստոսի 16-ից;
4. 1993թ. սեպտեմբերի 24-ին Մոսկվայում ստորագրված «Փախստականներին և հարկադրյալ գաղթականներին օգնելու մասին» համաձայնագիր
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1994թ. նոյեմբերի 21-ից;
5. Հայաստանի Հանրապետության Կառավարության և Միավորված Ազգերի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջև համագործակցության մասին համաձայնագիր ստորագրվել է 2004թ. նոյեմբերի 22-ին, վավերացվել է 2006թ. մարտի 20-ին, ուժի մեջ է մտել 06.04.2006թ:

Տեղեկատվության կարգով հայտնում ենք, որ ներքոնշյալ միջազգային պայմանագրերը ևս պարունակում են դրույթներ փախստականների և ռազմագերիների վերաբերյալ:

1. «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» կոնվենցիա
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1993թ. դեկտեմբերի 7-ից;
2. «Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի ժնևի կոնվենցիաների» թիվ 1 լրացուցիչ արձանագրություն
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1993թ. դեկտեմբերի 7-ից
3. «Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի ժնեի կոնվենցիաների» թիվ 2 լրացուցիչ արձանագրություն
   ՀՀ-ի համար աժի մեջ է 1993թ. դեկտեմբերի 7-ից;
4. «Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» կոնվենցիա
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1993թ. դեկտեմբերի 7-ից;
5. «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» կոնվենցիա
   ՀՀ-ի համար ուժի մեջ է 1993թ. դեկտեմբերի 7-ից:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Շ. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«28» 07 2008 N 1/7- 833

Հելսինկյան քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
պարոն Ա. Սաքունցին

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 2009թ. հուլիսի 8-ի թիվ ԵՊ-166 գրության ներկայացնում եմ տեղեկություններ ՀՀ-ում ապաստանած փախստականների մասին:

Առդիր՝ 3 էջ:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ԵԳԱՆՅԱՆ**

Տեղեկություններ ՀՀ-ում ապաստանած փախստականների մասին

1988-1992թթ. միջէթնիկական հակասությունների սրման և ազգամիջյան բախումների հետևանքով Ադրբեջանից Հայաստան գաղթեցին ավելի քան 408 հազար փախստականներ և բռնի տեղահանվածներ, որոնցից ավելի քան 60%-ը այնտեղ թողեցին իրենց ողջ ունեցվածքը, տները, բնակարանները:

1997թ. իրականացված հաշվառման տվյալներով, Հայաստանում բնակվող փախստականների և բռնի տեղահանվածների թիվը կազմում էր ավելի քան 311 հազար մարդ (մնացածները մեկնել էին բնակության այլ երկրներ (հիմնականում ՌԴ), իսկ 30 հազար արցախցիներ վերադարձան իրենց նախկին բնակության վայրերը):

Բռնագաղթի առաջին իսկ օրերից հանրապետության կառավարությունը և տեղական իշխանության մարմինները մեծ ծավալի աշխատանքներ են իրականացրել բռնագաղթածների ընդունման, տեղաբաշխման-տեղավորման և այլ առաջնահերթ խնդիրների լուծման ուղղությամբ:

90-ական թվականների կեսերից, երբ ակնհայտ դարձավ, որ փախստականների անվտանգ ու կամավոր վերադարձն իրենց նախկին բնակության վայրեր իրատեսական չէ, ՀՀ կառավարությունը նրանց նկատմամբ որդեգրեց ինտեգրման քաղաքականություն: Եվ այդ գործընթացում իրենց ծանրակշիռ ներդրումներն են ունեցել միջազգային և հասարակական տարբեր կազմակերպություններ, առանձին պետություններ և անհատ բարեգործներ՝ իրականացնելով բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված փախստականների հոգսերի թեթևացմանը, հանրապետությունում սոցիալ-տնտեսական լարվածության թուլացմանը:

Չնայած իրականացված աշխատանքներին, այնուհանդերձ մի շարք գործոններով պայմանավորված փախստականների սոցիալ-տնտեսական հիմնական խնդիրներից շատերը դեռևս լուծված չեն:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, փախստականների շրջանում գործազրկության մակարդակը տեղաբնակների համեմատ բարձր է՝ գրեթե 1,5 անգամ, գործարարությամբ զբաղվողների թիվը ցածր է 1,7 անգամ, 3 անգամ պակաս է մշտական աշխատանք ունեցողների թիվը:

Ընդհանրացնելով փախստականների խնդիրները՝ դրանք կարելի է խմբավորել՝ բնակարանային, զբաղվածության, իրավական պաշտպանվածության, սոցիալ-կենցաղային հիմնահարցերի տեսքով, որոնց լուծման ընթացքը հետևյալ իրավիճակում է:

Բնակարանային խնդիր

Իր կարևորությամբ և սրությամբ առանձնահատուկ նշանակություն ունի փախստականների բնակարանային ապահովության խնդիրը: Այն սերտորեն առնչվում է փախստականների ինտեգրմանը, մայր Հայրենիքում լիիրավ քաղաքացի դառնալու հոգեբանորեն կայացմանը:

Մինչ այժմ փախստականների բնակապահովության խնդիրը լուծվել է հիմնականում 2 ճանապարհով՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին և միջազգային կազմակերպությունների ու առանձին դոնոր պետությունների ֆինանսական աջակցությամբ:

Ներկա դրությամբ 9-10 հազար փախստական ընտանիքներ ապահովված չեն բնակարանով (կարիքավորների թվաքանակի շեշտակի տատանումները պայմանավորված են հիմնականում փախստականների միգրացիոն բարձր ակտիվությամբ):

Հաշվի առնելով ընդհանուր հիմնահարցի լուծման համար պահանջվող ֆինանսական միջոցների ծավալը (ավելի քան 50 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ), ՀՀ կառավարությունը նպատակահարմար համարեց խնդիրը լուծել ոչ թե մեկ ընդհանուր ծրագրի շրջանակներում, այլ այն տարանջատել ըստ կարիքավորության և փուլերի՝ առանձին ենթածրագրերով, ինչն ավելի իրատեսական է:

ՀՀ կառավարությունը 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատեց փախստականների բնակապահովության առաջնահերթ ծրագիրը, որի շահառուներ համարվեցին հանրապետության տարածքում ժամանակավոր կացարաններում (հանրակացարաններում, հյուրանոցներում, առողջարաններում, հանգստյան տներում, դպրոցներում, մանկապարտեզներում, հիվանդանոցներում, հիմնարկ-ձեռնարկությունների վարչական շենքերում և հանրային օգտագործման այլ տարածքներում) և վագոն-տնակներում բնակվող փախստականները, որոնք 2003թ. օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառվել էին Միգրացիայի և փախստականների նախկին վարչության կողմից՝ շուրջ 3,3 հազար ընտանիք: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին:

2005-2008թթ. ծրագիրն իրականացվեց ՀՀ մարզերում, իսկ ընթացիկ տարում այն գործողության մեջ մտավ նաև Երևանում: Երևանում ծրագրի շահառուների թիվը կազմում է ավելի քան 1000 ընտանիք:

ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 5-ի թիվ 118-Ն որոշման համաձայն ծրագրում այս տարի ընդգրկվեցին Երևան Մոլդովական 70/1 և Տերյան 107 հասցեներում գտնվող հանրակացարաններում բնակվող փախստական 50 ընտանիքները:

Ծրագրի իրականացման ժամկետները պայմանավորված են յուրաքանչյուր տարի ՀՀ պետբյուջեով նախատեսվող ֆինանսական միջոցների չափից:

Զբաղվածության խնդիր

Հանրապետության ժողովրդական տնտեսությունը, հատկապես արդյունաբերությունը դեռևս չի գործում ամբողջ հզորությամբ, աշխատատեղերի բացակայությունը մեծ չափերի է հասնում:

Աշխատունակ փախստականների շուրջ 65%-ը գործազուրկ են, չունեն եկամտի հիմնական աղբյուր:

1990-ական թվականներին փախստականների համար աշխատատեղեր ստեղծելու նպատակով ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակները վարկերի և գրանտների տրամադրման, զարգացման ծրագրերի ֆինանսավորման տեսքով որոշակի աջակցություն են ցուցաբերել, սակայն փախստականների զբաղվածության խնդրի լուծումը հեռու է բավարար համարվելուց:

Հարկ է նշել, որ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ զբաղվածության պետական ծառայության կողմից իրականացվող՝ մասնագիտական ուսուցման, ինչպես նաև աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման ծրագրերում փախստականները օգտվում են աշխատաշուկայում անմրցունակ խմբերին արվող լրացուցիչ երաշխիքներից:

Իրավական պաշտպանվածության խնդիրներ

Փախստականների իրավական պաշտպանվածության նպատակով դեռևս 1993թ. Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի ,Փախստականի կարգավիճակի մասինե Կոնվենցիային և նույն թվականին դարձել Միգրացիայի Միջազգային կազմակերպության անդամ:

1999թ. ընդունվեց «Փախստականների մասին» ՀՀ օրենքը, որը լրամշակվեց և ավելի ընդգրկուն տեսքով՝ ներկա պահանջներին և բնագավառի միջազգայնորեն ընդունված իրավական ակտերին համապատասխան, 2008թ. նոյեմբերին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը:

Մինչ այժմ ընդունվել են բազմաթիվ օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, կառավարական որոշումներ, որոնք նպատակաուղղված են լուծելու փախստականների բազմաբնույթ իրավական ու սոցիալ-տնտեսական խնդիրները:

Օրենսդրական դաշտի կատարելագործման և լրացման աշխատանքները շարունակական են:

ՀՀ կառավարության կողմից իրականացվում են աշխատանքներ օրենքների կիրարկումն ապահովելու ուղիներն ու մեխանիզմները հստակեցնելու և փախստականների հիմնախնդիրների լուծման նպատակամղված միջոցառումների կազմակերպման ուղղություններով:

Սոցիալ-կենցաղային խնդիրներ

Լուրջ աշխատանքներ կան փախստականների առօրյա բազմաթիվ և բազմաբնույթ չլուծված սոցիալական, կենցաղային, բարոյահոգեբանական հարցերում համակողմանի օգնություն ցուցաբերելու և հասարակության հետ նրանց ինտեգրման գործընթացն ակտիվացնելու ուղղությամբ:

2009թ. հուլիսի 1-ի տվյալներով 82.500 փախստական անձինք ձեռք են բերել ՀՀ քաղաքացիություն:

Չնայած հայտնի օբյեկտիվ պատճառներին, ՀՀ կառավարության կողմից իրականացվում են հնարավոր ձեռնարկումներ՝ փախստականների հիմնահարցերը և առօրյա խնդիրները լուծելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

24 Հուլիսի 2009թ. No Ե2009-7187

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության նախագահ պարոն Ա. Սաքունցին

Հարգելի պարոն Սաքունց

Անհայտ կորածների, գերիների, պատանդների որոնման, վերադարձման, նրանց ընտանիքներին աջակցություն տրամադրելու աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ նախագահի 2000թ. ապրիլի 18-ի ՆՀ-553 հրամանագրով ստեղծվել է գերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողով:

Միաժամանակ տեղեկացնենք, որ 2009թ. սեպտեմբեր ամսից սկսվելու են «Անհայտ կորածների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքները, որի նպատակով կազմվել է աշխատանքային խումբ՝ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Օրենքը կկարգավորի վերը նշված անձանց կարգավիճակի, նրանց ընտանիքներին սոցիալական երաշխիքների տրամադրման և այլ կազմակերպա-իրավական հարցեր:

Տեղեկացնենք նաև, որ փախստականների բնակարանային պայմանների բարելավման նպատակով Հայաստանում Շվեյցարիայի համագործակցության գրասենյակի աջակցությամբ, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքում և Գորիսում 2008թ.-ին կառուցվել է երկու Սոցիալական տուն՝ շուրջ 40 բնակարանով, որոնց շահառուների մեծ մասը միայնակ փախստականներ են, որոնք նախկինում բնակվում էին հանրակացարաններում՝ զուրկ կոմունալ-կենցաղային տարրական պայմաններից:

Նախատեսվում է 2010թ. շարունակել այդ ծրագիրը և Գորիսում կառուցել ևս մեկ Սոցիալական տուն, քաղաքի շուրջ 70 ժամանակավոր տնակներում բնակվող միայնակ փախստականների բնակարանային խնդիրը լուծելու նպատակով:

Համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 3-րդ մասի «բ» ենթակետի՝ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին վերաբերող դրույթները տարածվում են նաև ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների վրա:

Ըստ այդմ, ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներն ունեն կերակրողին կորցնելու դեպքում տրվող կենսաթոշակի իրավունք և օրենքով սահմանված այլ սոցիալական երաշխիքներ:

ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի N 778 որոշմամբ հաստատված «Զինծառայողներին երկարամյա ծառայության ընդհանուր կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետի (ստաժի) արտոնյալ հաշվարկի, ինչպես նաև այլ բնույթի գործունեության տեսակների ցանկի, հաշվառման կարգի և պայմանների» 2-րդ կետի 2-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ստացած զինծառայողների զինվորական ծառայության ստաժում արտոնյալ պայմաններով հաշվառվում է գերության ժամանակաշրջանը, եթե զինծառայողը կամավոր չի գերվել և գերության ընթացքում հանցագործություն չի կատարել ՀՀ նկատմամբ՝ մեկ ամսվա ծառայությունը 2 ամիս հաշվելու պայմանով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 29-ի N2317-Ն որոշման 20-րդ կետի համաձայն՝ եթե ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինվորական ծառայողների ընտանիքների անապահովության միավորը ցածր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստի իրավունքի սահմանային միավորից կամ հավասար դրան, ապա այդ ընտանիքի անապահովության միավորը հավասարվում է սահմանային միավորից մեկ հարյուրերորդական միավոր բարձր միավորի, որի արդյունքում այդ ընտանիքները ձեռք են բերում ընտանեկան նպաստի իրավունք»:

Հարգանքներով Գ. Պետրոսյան

Հանդիպում «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանի հետ

Երիտասարդ խաղաղասերները 2010թ. մարտի 3-ին հանդիպեցին ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանի հետ:

Հանդիպման նպատակն էր քննարկել Հայաստանում ծրագրի շրջանակներում անհայտ կորածների և նրանց հարազատների, նախկին ռազմագերիների, փախստականների խնդիրների ուսումնասիրության հիման վրա մշակված զեկույցները:

Զեկույցները կազմվել են Հայաստանի երիտասարդ խաղաղասերների մասնակցությամբ իրականացված ուսումնասիրությունների հիման վրա:

Զեկույցներում ներկայացված են նաև առաջարկություններ անհայտ կորածների ընտանիքների, փախստականների, նախկին ռազմագերիների խնդիրների լուծման վերաբերյալ:

Հանդիպման սկզբում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը ներկայացրեց ծրագրի շրջանակներում Հայաստանում անհայտ կորածների և նրանց հարազատների, նախկին ռազմագերիների, փախստականների խնդիրների ուսումնասիրության հիման վրա կազմված զեկույցների համառոտ բովանդակությունը, նշված թիրախ խմբերի խնդիրների լուծման կարևորությունը մարդասիրական իրավունքի տեսակետից:

Երիտասարդ խաղաղասերների հանդիպումը «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ս. Սաֆարյանի հետ

Ստեփան Սաֆարյանը կարևորեց նման նախաձեռնությունները՝ հատկապես հասարակական կազմակերպությունների դերը:

Նա բարձր է գնահատում հայ-ադրբեջանական երկկողմանի շփումները, որոնք օգնում են զսպելու պատերազմի վերսկսումը և հույս արթնացնում խնդիրը քաղաքական ուղիներով լուծելու համար: Նմանատիպ ծրագրերը շատ կարևոր են և ավելի ակնհայտ արդյունքներ են տալիս:

«Տեղյակ լինելով ղարաբաղյան հակամարտության վերլուծություններին՝ կարող եմ ասել, որ ինչքան էլ վերլուծություններ անեն, բնական է, ամբողջական վերլուծություն հնարավոր չէ կատարել, անգամ մինչև վերջ պարզ չէ, թե ինչպիսի հետևանքներ է առաջացրել այս պատերազմը՝ սոցիալական, հոգեբանական, տնտեսական և այլ առումներով: Այդ հետևանքների վերացումն էլ բարդ է, ցանկություն էլ չենք տեսնում, բոլորը շարունակում են խաղալ ինչ-որ խաղի կանոններով, որի դեպքում ոչ մի կողմը չի շահում:

Հասարակությունը գտնվում է դեպրեսիոն, վախեցած մթնոլորտում: Պատերազմի մտածողությունը, չլուծվածությունը իր դրոշմն է թողել նաև քաղաքականության մեջ»:

Երիտասարդ խաղաղասերները, մոտիկից ծանոթանալով այդ խմբերի հետ, նշեցին, որ նրանք բոլորն էլ պետության կողմից աջակցության կարիք ունեն: Դժգոհում են, որ պետությունը հիշում է նրանց միայն այն ժամանակ, երբ իրենց դա պետք է, իսկ հետո մոռանում է:

Արթուր Սաքունցը, խոսելով *անհայտ կորածների և նրանց խնդիրների մասին,* նշեց, որ

պետությունը մինչ այժմ որևէ կերպ չի բացահայտում այն հանգամանքները, որոնց հետևանքով անհետացել են այդ մարդիկ:

Ս. Սաֆարյանը այդ խնդրի վերաբերյալ նշեց. *«Անհայտ կորածները մեծ գնի մի մասնիկն են, որ վճարել են պատերազմի համար»:*

Նա պատմեց այնպիսի հետազոտությունների մասին, որ իրականացնում են այլ երկրները՝փորձելով փոքր-ինչ պարզություն մտցնել նման հարցերում: Օրինակ Բոսնիա և Հերցոհովինայից մի աղջիկ, որի հետ Ս. Սաֆարյանը ծանոթացել է միջազգային հանդիպումներից մեկի ժամանակ, զբաղվում է ԴՆԹ անալիզներով: Սա, բնականաբար, հետևողական և ծանր աշխատանք է, որը հարազատների համար հույսի շող է, որ մի օր հնարավոր է գտնեն թեկուզ իրենց կորցրած զավակի դիակը կամ նրա մի մասունքը: Մյուսները զբաղվում են հիշողությունների վերականգնմամբ ապագա սերունդների համար:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ *նախկին ռազմագերիների* համար առաջնային խնդիր է առանձին կարգավիճակի բացակայությունը, զբաղվածությունը, առողջության վերականգնումը և հոգեբանական աջակցությունը:

Այդ խնդիրների վերաբերյալ Ս. Սաֆարյանը նշեց հետևյալը. *«Չունենք համապատասխան հոգեբաններ, որոնք կարող են աշխատել նման մարդկանց հետ: Կարգավիճակի հարցը հնարավոր է օրենսդրությամբ կարգավորվի, որն էլ որոշակի արտոնություններ կսահմանի այդ մարդկանց համար»:*

Երիտասարդ խաղաղասերները նշեցին, որ փախստականների համար առաջնային խնդիր է բնակարաններով ապահովումը և ինտեգրումը հասարակության մեջ: Չնայած երկար ժամանակ է անցել, բայց հասարակությունը մինչև հիմա չի ընդունում այդ մարդկանց:

Փախստականները զղջում են նաև քաղաքացիություն ձեռք բերելու համար: Հարցումներին մասնակցած բոլոր փախստականներն արդեն չեն համարվում փախստականներ՝ ՀՀ կառավարությունը նրանց քաղաքացիություն է տվել: Ձեռք բերելով քաղաքացիություն՝ նրանք զրկվել են բոլոր արտոնություններից: Փախստականներին մի կողմից ինտեգրել են, մյուս կողմից զրկել օգնությունից:

Երիտասարդ խաղաղերներից մեկը նշեց. *«Կարին գյուղում սկզբնական շրջանում եղել են 200 փախստական ընտանիք, իսկ այժմ միայն 40-50 ընտանիք է մնացել: Բոլորը թողել-գնացել են: Մարդկանց վերաբնակեցրել են՝ հաշվի չառնելով պայմանները»:*

Փախստականների համար առաջնային խնդիր է մնում բնակարաններով ապահովումը: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ նրանք ապրում են շատ վատ պայմաններում: Նրանցից շատերը հանրակացարաններում են ապրում:

Փախստականների աշխատանքային խնդրի լուծման համար Ա. Սաքունցը առաջարկեց. «Ընդունել օրենսդրական նորմեր, ըստ որի, փախստականներին ընդունելով աշխատանքի՝ գործատուն կվճարի քիչ հարկեր»:

Վերջում ավելացրեց. *«Եթե ոչ լուծում, ապա գոնե օրակարգում դրվի այս խնդիրները»:*

«Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանը ողջունեց նմանատիպ նախաձեռնությունները և խոստացավ, որ վերոնշյալ խնդիրների լուծման վերաբերյալ իրենք քայլեր կձեռնարկեն:

Եզրակացություններ

Ներկայացված գրքույկը հայ, ադրբեջանցի և ղարաբաղցի երիտասարդների համատեղ աշխատանքի արդյունք է:

Այն բոլոր գործողությունները, որոնք իրականացվեցին ծրագրի շրջանակներում, հնարավորություն տվեցին երիտասարդներին անմիջականորեն ծանոթանալ ղարաբաղյան կոնֆլիկտի հետևանքով ի հայտ եկած փախստականների, նախկին ռազմագերիների, անհայտ կորածների ընտանիքների խնդիրներին:

Երիտասարդների հանդիպումները, ֆիլմի նկարահանման աշխատանքները, բլոգի ստեղծումը նպաստեցին երիտասարդների միջև կարծրատիպերի վերացմանը, միմյանց նկատմամբ բարիդրացիական հարաբերությունների ձևավորմանը, շփումների զարգացմանը:

Պետական մարմինների հետ հանդիպումները նպաստեցին երիտասարդների մոտ հակամարտության հետևանքով տուժածների շահերի պաշտպանության ունակությունների ձևավորմանը: